

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ. ԽՈՐՀՐ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Պարտաւարներ բոլոր յերկրների, միացե՛ք

№ 18

ԳԱՂԱԲԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

№ 18

ԱՆՈՒՇԱՎԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ


Բանգար

ԳՈՐԾԱԴՈՒԼ
ԿԱՍ
ՏԳԻՏՈՒԹՅԱՆ ԶՈՅԵՐ

ԴՐԱՄԱՅ 3 ԳՈՐԾ.

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՅԱՆՔԻՑ

ՅԵՐԵՎԱՆ
ՏՐԵՍՏԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ
1924




ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ. ԽՈՐՀՐ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Պոլեմարհեր բոլոր յերկրների, միացե՛՛հ

№ 18 **ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՍՍՎՈՐՈՒԹՅԱՆ** № 18
ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ԱՆՈՒՇԱՎԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Բաճկոր



ԳՈՐԾԱԴՈՒԼ
ՏԳԻՏՈՒԹՅԱՆ ԶՈՋԵՐ

ԴՐԱՄԱ Յ ԳՈՐԾ.

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՅԱՆՔԻՑ

14876

A II
38898

Յ Ե Ր Ե Վ Ա Ն
Տ Ր Ե Ս Տ Ի Ա Ռ Ա Չ Ի Ն Տ Պ Ա Բ Ա Ն
1924



Սույն պիեսան գրված է 1905 թ.,
և առաջին անգամ բեմադրվել է 1912
թվին թիֆլիսում արհեստական բեմի
վրա-դերասան Արմենյանի ղեկավար-
ությամբ:

Ա. Վ.



ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

- | | |
|----------------------------------|------------------------------------|
| 1. Գեվորգ Բաղդասնիչ | Գործարանատեր |
| 2. Մազբաղ | Սրա կին |
| 3. Սիրանուշ | Սրանց աղջիկը |
| 4. Վահան | Գործարանի բժիշկ |
| 5. Սեփան | Գործարանի կառավարիչ |
| 6. Գիգուի | Պանդուկապետ |
| 7. Աբաղ | |
| 8. Գարեգին | } Կոնստանդին Գրիգորյանի ֆունդացիոն |
| 9. Գրիգոր | |
| 10. Սիմոն | |
| 11. Շաֆո | |
| 12. Աբրահամ | |
| 13. Սահակ | } Կոնստանդին Գրիգորյանի ֆունդացիոն |
| 14. Կարսա բերող բանվոր | |
| 15. Խալի բերող բանվոր | |
| 16. Յեսո | Պանդուկի ծառան |
| 17. Մարգար | Գեվորգ Բաղդասնիչի տան ծառան |
| 18. Հերիֆնազ | » » աղախին |
| 19. Թարոս | } Ուրիշ գործարանի բանվորներ |
| 20. Մարոս | |
| 21. Խեչո | |
| 22. I. II. III. բանվորուհիներ | |
| 23. Գոնապահ. Բաղաֆապահ | |

I. ԳՈՐԾՈՂ ՈՒԹՅՈՒՆ

Բեմը ներկայացնում է ծխախոտի գործարան՝ աշխատանքից առաջ: Այլ ու ձախ դրված է զաղզահներ և նստարաններ: Դաղզահների վրա թուփուն, գիլգի դատարկ և լցրած տուփեր տուփ

յուրաքանչյուր բանվորի առաջ պաշկաներով դրված: Գիլգու ծայրերը կտրող մկրատ, թութուն, կշռելու համար կշեռք, մի քանի ուրիշ գործիքներ և այլ պարագաներ: Յերկու դուռ, մեկը մուտքն է—և տանում է դեպի ներսի մյուս բոլոր բաժանմունքները, իսկ մյուսը՝ տանում է դեպի գործարանի գրասենյակը:

Բանվորները աշխատանքի ժամանակ հագնում են կապույտ կամ սպիտակ խալաթներ: Բանվորները յերկու սեռից:

Տ Ե Ս Ի Լ Ի

Գ Ե Վ Ո Ր Գ, Ս Տ Ե Փ Ա Ն Յ Ե Վ Ա Բ Ր Ա Հ Ա Մ

(Գրասենյակից յերեքով ներս են մտնում: Աբրահամը սաստիկ հիվանդ է. հազիվ է վոտքի վրա կանգնում:

ԱԲՐՀ.— Խաղեյին, մի յերկու ուրբի՛ն ձեզ համար մեծ գուժար չի:

ԳԵՎՈՐԳ.— Դու ստիպում ես ինձ կրկնել ասածներս, ես քեզ ասացի, վոր չեմ տա: Հետևապես կանգնելդ զուր է:

ԱԲՐՀ.— Խաղեյին, ախր հիվանդ մեռնում եմ: Հազը ինձ սպանում ա: Վոտքի վրա կանգնել չեմ կարողանում: Յերկու ուրբի՛ն ձեզ համար ի՞նչ մեծ փող ա...

ԳԵՎՈՐԳ.— Վոչ մի գրոշ: Իմ կամքս այդպես է. ինձ ստիպել հանդիմանել, դուք իրավունք չունեք:

Ահա տեսնում ես, ետ կանոնադրության մեջ վորոշված է իմ և թե ձեր պարտականությունները: Իսկ յեթե այդ տեղ կամի կես, վորի հետ դուք համաձայն չեք, ետ դեպքում կարող եք թողնել գործարանս և հեռանալ: Անգործ բանվորներ շատ, ամեն որ գլուխս տանում են իրենց գիմումներով:

ՍՀԵՓ.— Անցյալ որք տասը հոգի նորից յեկել խնդրում էյին. յես չնդունեցի:

ԳԵՎՈՐԳ.— Լսո՞ւմ ես: Աշխատանք փնտրող բանվորները գիտես թե վորքան շատ են: Ինչ միտք, հիվանդ բանվորներին պահել, իսկ առողջներին մերժել: Յեթե մի ուրիշ ավելի խելոք գործարանատեր լիներ իմ տեղը, հիվանդ և աշխատանքի անընդունակ բանվորներին բոլորին կհեռացներ և նրանց փոխարեն նոր և թարմ ուժի տեր բանվորներ կնդուներ: Բայց տեսնում ես

յես ետ չեմ անում: Իսկ յեթե դուք ձեր ամենորյա դիմումներով
և անտեղի պահանջներով ինձ կը ձանձրացնեք, յես ել նույնը
կանեմ:

ԱԲՐՀ.— Խաղեյին, բացի հիվանդ լինելս՝ տանը հազար ու
մի կարիք ունեմ, մեղք եմ, խղճացեք:

ԳԵՎՈՐԳ.— Ուրեմն յես մեղք չեմ. ձեր կարծիքով յես կա-
րիքներ չունեմ: Բժիշկ պահանջեցիք տվի, աշխատանքի ժա-
մերը կրճատեցի, ոռճիկներդ ավելացրի. ուրիշ ել ի՞նչ եք ուզում:
Ամիսը չլրացած նոր պահանջ կներկայացնեն. կարծես մեծ աշ-
խատանքի վրա յենք: Վոչ, սիրելիս. ախորժակներդ չափավորեք.
ձեր խաղեյնների համար դուք վոսկու ամբարներ չեք լքցնում,
վոր եղպես պահանջում եք: Ի՞նչ կասես Ստեփան:

ՍՏԵՓԱՆ.— Ճշմարիտ խոսքի դեմ ինչ կարող եմ ասել:

Ինչ վոր պահանջել են, այն ել ստացել են: Ձեր բարեսրտու-
թյունից կարծում եմ, վոր նրանք գոհ պիտի լինեն: Ձեր փոխա-
րեն յեթե մի ուրիշը լիներ՝ սրանց հետ բոլորովին այլ կերպ
կվարվեր: Դուք միշտ համբերող եք և զիջող:

ԱԲՐՀ.— Լավ եք ասում, պարոն Ստեփան. ուրագի նման
միշտ ձեր կողմն եք տաշում: Ախր քիչ ել մեղ համար մտածեցեք
մեր դրության մեջ մտեք, մեր հալն ել հարցրեք ե... մի սյու-
րու քյուլֆաթ շինքս ե ընկած. մի յերկու շահի փող եմ
ստանում, ետ ել վոր դեղի տամ, յես խմեմ, բա նրանց ի՞նչ ջու-
ղար տամ: Նրանք ուտել չեն ուզում. ապրել չեն ուզում...

ԳԵՎՈՐԳ.— Եդ իմ գործը չե, յես պարտավոր չեմ ձեր ըն-
տանիքի հոգսն ել քաշելու: Աշխատում եք ձեր վարձն ել ստա-
նում եք: Ձեր պահանջը յեթե արդարացի և որինական լիներ,
յես կարծում եմ վոր եղ կանոնադրության մեջ գրված պիտի
լինի:

ԱԲՐՀ.— Խաղեյին, արդարացի և որինական շատ պահանջ-
ներ կան, վոր եղ կանոնադրության մեջ նույնպես չի հիշված...
Ես իմ կարճ խելքովս իմանում եմ, վոր հիվանդ չբանջորին յե-
թե դեղի փողը չպետք ա տրվի, բժիշկն ել զուրա: Իսկ յեթե
բժիշկը տալիս եք, որենքով դեղի փողն ել պետք ա տաք:

ԳԵՎՈՐԳ.— Լսում ես, Ստեփան: Բանվորս ինձ հետ որեն-

քով ե խոսում: Չե, ինչպես տեսնում եմ, դասդ լավ ես սովորեցի:
Անխրանով...

ՍՏԵՓԱՆ.— Իսկապես վոր անխրավություն են անում:
Բանվորին դեղ և բժիշկ տալ ախր ո՞վ ե լսել. ո՞վ ե իմացել:

ԳԵՎՈՐԳ.— Կամ թե չե, նրանք խմեն, փողը՝ ես տամ:
սա ի՞նչ միտք ե, չեմ հասկանում:

ՍՏԵՓԱՆ.— Այդ դեպքում, Գեվորգ Բաղդանիչ, դուք ստիպ-
ված կլինեք ձեր վողջ կարողությունը բանվորներին բաժանել:

ԳԵՎՈՐԳ.— Բանվորներին բաժանելու յես կարողություն
չունեմ, Այդ տեսակ հիմարություն նրանք իմ կողմից չեն տես-
նի: Դե, ինչես չորացած փայտի նման ցցվել առաջս: Կորի, աչ-
քիցս հեռացիր:

ՍՏԵՓԱՆ.— Ի՞նչու ես գուր տեղը արյունը պղտորում: Քեզ
վոր ասում են գնա. պիտի իսկույն գնաս:

ԱՅՐՀԱՄ.— Կգնամ, բա հո եստեղ չեմ մնալու:

(ախ Բաժելով լեզվ գլուխը շարժելով գնում ե)

Տ Ե Ս Ի Լ Ի I

ԳԵՎՈՐԳ, ՍՏԵՓԱՆ ՅԵՎ ՍԻՄՈՆ

ԳԵՎՈՐԳ.— Սիմոն, դեռ գործը չսկսված՝ դու յեկել և ու-
ղում ես աշխատել:

ՍԻՄՈՆ.— Առաջի անգամը չի, խաղեյին, յես միշտ ել վաղ
եմ գալիս. ամեն որ սվիստոկից մի սհաթ առաջ — յես եստեղ
կանգնած իմ գործիս եմ: Պարոն Ստեփանը թող վկայի:

(Ստեփան գլխով գրական ետև ե գնում)

ԳԵՎՈՐԳ.— Իսկ ինչպես ե, վոր ընկերներդ թույլ են տա-
լիս և վոչինչ չեն ասում:

ՍԻՄՈՆ.— Ինչ նրանց գործնա: Քան թե մը սհաթ պիտի
քուչումը կանգնեմ, սրա-նրա հետ գյավազություն անեմ, ավելի
լավ չե, վոր գամ բանեմ, գործս առաջ գցեմ:

ԳԵՎՈՐԳ.— Ստեփան, ահա թե ինչու իմ հին բանվորները
ինձ մոտ միշտ պատվով են յեղած: Աշխատասեր և ազնիվ բան-
վորներին յես միշտ սիրել և հարգել եմ. բայց ինչպես տեսնում
եմ, նախանձ ու շար մարդիկ ամեն կերպ աշխատում են իմ ու-

սրանց մեջ յերկապառակությունն գցել, և սրանց իմ դեմ լարել:

ՄՏԵՓԱՆ.— Սիմոն, բժիշկի մասին և ասում:

ՄԻՄՈՆ.— Գիտեմ. հասկանում եմ: Նա նոր չի ուզում եղանակ: Նա յեկած որվանից, իր քաղցը լեզվով, իր ջուռաբեջուռութոսքերով ու մասլհաթներով բանավորներին իր կողմնա գրավել: Վոր իմանաք նա ինչ լեզու ունի. ո՛. պա՛. պա՛. պա՛. շահմար ոձին իր բնից կհանի: Ժողովներին տենաք վոնցա խոսում. կմնաք զարմացած:

ԳԵՎՈՐԳ.— Ուրեմն, բժիշկը ժողովներ էլ ե անում:

ՄԻՄՈՆ.— Ինչպես չե. մեր բանավորները միշտ գնում են, մի անգամ ելյես գնացի, չե՛, չե՛, չե՛, յես չգնացի (ԱՅԻ ԿՈՂՎ) բիշեր մնում հա՛...:

ՄՏԵՓԱՆ.— Գեվորգ Բաղդանիչ, ասածներս կարծեմ յենթադրությունն չեր:

ԳԵՎՈՐԳ.— Այո Ստեփան: Ինձ համար այժմ ամեն ինչ պարզ ե: Լսիր Սիմոն, դու ասացիր, վոր նրանց ժողովներում յեղել ես:

ՄԻՄՈՆ.— Ձե խաղեյին, ասած, յերկինք, նրանց ժողովներին յես չեմ գնացել: (ԱՅԻ ԿՈՂՎ) իմ լեզվով վոնց կրակի մեջ ընկա:

ԳԵՎՈՐԳ.— Գիտեմ, դու հակառակվում եյիր և չեյիր ուզում գնալ, բայց ընկերներդ քեզ խարեցին և զոռով տարան: Գրա համար դու չկարծես թե քեզ վրա նեղանում եմ, յես միայն ուզում եմ իմանալ ժողովներում բժիշկը ձեզ հետ ի՞նչի մասին և խոսում:

ՄԻՄՈՆ.— Ձես գիղա խաղեյին, նա ուրիշ ել ինչի մասին կխոսա, դիմ մեր ու ձեր մասին ա խոսում:

ԳԵՎՈՐԳ.— Իմ մասին, թե ի՞նչ, վոր յես ձեզ հարստահարում եմ, ձեզ շահագործում եմ, առավոտից մինչև յերեկո ձեզ տանջում-չարչարում եմ, և դուք տղետ ու անկազմակերպ բանավորներդ տրտունջն ու բողոքը ձեր սրտում, ստիպված եք խոնարհվել իմ առաջ, իմ ստրուկը, իմ դերին, իմ ճորտը լինել:

ՄԻՄՈՆ.— Խաղեյին, ընենց տիղին խոսումեք, կասես դուք ել ժողովուհներ ըլել, նրա խոսքերն եք լսել: Ետ ինչ վոր դուք

ասացիք, ետ բոլորը բանվորներին ասել ու հավատացրել ա: Նա նրանց ամեն ժամանակ հեղափոխական քարոզներա կարդում և ինչ վոր մի մեծ կովի համար պատրաստում:

ԳԵՎՈՐԳ.— Լսում յես Ստեփան, չպետք և հետաձգել, հարկավոր և նրան գործարանից անմիջապես հեռացնել: Քանի դեռ ուշ չե. քանիդեռ բանվորները բոլորը չեն վարակվել:

ՍԻՄՈՆ.— Ուշա խազեյին, նրան հեռացնելով բան չի դառնա: Մեր բանվորների մեջ ընենց տղերք կան, վոր բժշկից վոչընչով պակաս չեն:

ՄՏԵՓԱՆ.— Գրիգորի և Արշակի մասին յես ասում.

ՍԻՄՈՆ.— Հա, հենց դրանք են վոր կան: Դուք դրանց լավ չեք ճանաչում: Նրանց են երկեն մազերի տակը տասը հարա սատանաներ կան նստած: Գիտեք թե քանի դավոդի տղերք յեն դժվացրել ու զարաստովկա անել տվել: Ամեն տեղ հոբժիշկն ինքը չի գնում, շատ անգամ դրանց ա դրկում: Դրանք վոր կան Եզգիստնի փոնոգրափին, բժիշկը իր իմացածը լցրել ա մեջներն ու դրիլ ես տեղ: Ինքը վոր որեսի դենը չինի ել, նրա ձենը, նրա խոսքերը մենք ես տեղ ամեն որ լսում ենք:

ԳԵՎՈՐԳ.— Նրանց ձենը յես ենպես կկտրեմ, վոր դուք հավիտյան չլսեք: Ստեփան, նրանց ազգանունները կը գրես և կտաս ինձ:

Իսկ դու Սիմոն, սրանից հետո գործդ բոլորովին կթողնես և նրանց վրա ուշադրություն կդարձնես: Կհետևես նրանց ամեն մի քայլափոխում: Ո՛ւր են գնում, ո՛ւր են հետ են տեսնվում, նրանց հետ ի՞նչ են խոսում, ի՞նչ են մտածում: Ժողովները յե՛րբ, կամ վո՛ր տեղ են նշանակում: Մի խոսքով ետ բոլորը իմացիր և իմացածդ արի ժամանակին ինձ հայտնիր: Դրա համար դու ինձնից լավ վարձատրություն կստանաս: Հավատարիմ մարդկանց յես գնահատել գիտեմ: Վո՛րքան ոտճիկ յես ստանում:

ՍԻՄՈՆ.— Որը ութանասուն կոպեկ.

ԳԵՎՈՐԳ.— Սրանից հետո դու կստանաս որը մի ուրբիլ յերեսուն կոպեկ, միայն թե իսկությամբ և ճշտությամբ կատաքես քեզ վրա դրված պարտականությունը: Հը, ի՞նչ պատահեց: Յնչո՛ւ ետպես խորը մտածմունքի մեջ ընկար: Յերևի դժվարա-

նմամբ յես: Գո կամքն. յես քեզ չեմ ստիպում: Յես միայն ցա-
վում յեմ, վոր յերկար տարիներ ինձ մոտ հավատարիմ աշխա-
տելուց հետո՝ այս որ պիտի թողնես գործարանս ու հեռա-
նաս:

ՍԻՄՈՆ.— Խաղեյին, յես հեռանամ. ինչի, յես ձեզ ինչ եմ
արել: Բա յես վոր ես տեղից հեռանամ տո՛ւնս, ընտանիքս,
երեխե՞ս...

ԳԵՎՈՐԳ.— Դա արդեն քո գործն է: Նրանց համար դու
պետք ե մտածես. նրանց հոգսը դու պետք ե քաշես: Իմ գործա-
րանում դու կաշխատես թե մի ուրիշը, ինձ համար դա միև-
նույնն է:

ՍԻՄՈՆ.— Խաղեյին, անխ...

ԳԵՎՈՐԳ.— Առանց ախրի-մախրի պատասխաններ, յերկար
մտածելու կարիք չկա: Ասա, դու ուզում ես գնալ, ընկնել փո-
ղոցները, ամիսներով դուրսը անգործ թափառել, ընտանիքդ,
երեխաներդ մատնել սովի, զրկանքի, թե ավելի լավ ե, վոր
մնաս ինձ մոտ, աշխատես, լավ ոռճիկ ստանաս, տունդ, ընտա-
նիքդ, երեխաներդ ապահովես... քո առաջ դրվում ե յերկու
ձանապարհ, ընտրիր վորը կամենաս: Երկուսից մեկը, գնա՛լ, թե
մնալ...

(Սիմոնը յերկար մտածելուց հետո)

ՍԻՄՈՆ.— Մնալ, խաղեյին, մնալ...

(Գնում է սեղը կանգնում եվ աշխատում)

ՍՏԵՓԱՆ.— Յես այդպես ել յենթադրում եի.

ԳԵՎՈՐԳ.— Ուրիշ կերպ լինել չեի կարող:

(Գործարանի գործի հրավերոց ցակը փչում է.
բանվորներն ու բանվորուհիները ներս յեն գալիս.
հրանցից մի մասը անցնում է մյուս բաժանմունի-
ները, իսկ մյուս մասը մնում է բեմի՝ վրա յեվ քակ-
սում է զազգյահների մոտ կանգնել եվ աշխատել:
Գիլգի յեն լցնում, ծայրերը կտում. սուփերի մեջ
գաբսում. կեռնով քուրուն կռում յեվ այլն:)

Տ Ե Ս Ի Լ III

Նույնք Գարեգին, Արամկ, Շաֆրա, ուրիշ բանվար ու բանվորուհի յեզ հետ Գրիգոր:

Շաֆրոն. Սիմոնը. Սահակը մի շարժում յեզ մի-յեզնույն զազգյաի վրա յեն աշխատում. իսկ Ար-ճակը. Գարեգինը յեզ Գրիգորը մյուս զազգյաի վրա: Գրիգորը հետ մտնելիս «Մարտեւոզ» է շրջ-վացնու:

ՍՏԵՓԱՆ.— Ի՞նչ յես շվաջնում. փողոցումը չես. հազար-անգամ ասել յեմ, ներս մտնելիս ձեզ որինավոր և հանգիստ-պահեք:

ԳԵՎՈՐԳ.— Ասածդ յերբ չեն հասկանում, տուգանքը նրանց հասկացնել կտա:

ԳՐԻԳՈՐ.— Վտաքներս դեռ ներս չղրած՝ աչքներին արդեն-ծուռ յերևացինք:

ԳԵՎՈՐԳ.— Դե բավական է, դու խոսելու համար չես յե-կել: Ստեփան լավ հակիր: Յեթե թույլ տվիր՝ նրանք ամբողջ որը կխոսեն, հեքյաթներ կպատմեն. հաշիվներին ուշադրութուն դարձրու. տես սիվ ի՞նչ է ստանում, և վորքան գործ շինում: Են դեպքում, յերբ մեկի աշխատանքը իր ստացածով չբազմա-պատկվեց, դժւրս, դժւրս շարտել: Ծույլ և շատախոս բանվորներ ինձ հարկավոր չեն:

(Ստեփանի հետ զնում է մյուս բաժանմունքը)

Տ Ե Ս Ի Լ IV

ԲԱՆՎՈՐՆԵՐԸ ԱՌԱՆՑ ԳԵՎՈՐԳԻ ՍՏԵՓԱՆԻ

ԳՐԻԳՈՐ.— Վտաներս դեռ ներս չղրած, սկսում են վրա-ներս խոսար: Յերկու բոպե վոր ուշանում ենք շտրաֆ են գրում մի բոպե պարապ վոր մնում ենք ձեռաց նկատողութուն են անում. իսկ իրանք վոր տարին տասներկու ամիս վոչինչ չեն շինում. ամբողջ որը պարապ-սարապ, ձեռները քամակներին դրած, իրանց համար արխային ման են գալիս, վոչինչ. դա-

աչքներին չի գալիս. գրա համար նրանց վրա խոսող, նրանց նկատողություն անող չկա ...

ՇԱՔՐՈ.— Եդ եր պակաս, վոր դուրս գաք նրանց վրա խոսաք.

ՍԻՄՈՆ.— Իրանց վրա սվ պտի խոսա, դժւ թե ես:

ՇԱՔՐՈ.— Խաղերնի դեմ խոսալու սվ իրավունք ունի. նըրանց կամքին հակառակվել սվ կը համարձակվի: դա միթե կարելի բանա: Գործարանի տերն ու տիրականը նրանք են. որ ենքն ու իրավունքը նրանց ձեռքին ա:

ԱՐՇԱԿ.— Ետ որ ենքներով ու իրավունքերովնա, վոր նըրանք մեզ խաբում են ու ճնշում ... Ետ որ ենքներովն ու իրավունքներովնա, վոր նանք մեզ թալանում են ու զրկում ... Ետ որ ենքներով ու իրավունքներովնա, վոր նրանք մեզ տանջում են ու ստրկացնում ... Իրանցովա վոր նրանք մեր արյունը ձծում, մեր միտքն ու հոգին թունաւորում:

ԳՐԻԳՈՐ.— Ետ տանջող ու ճնշող որ ենքներն ու իրավունքներնա, վոր նրանց ձեռքից մենք պիտի խլենք, ետ ստրկացնող ու շահագործող որ ենքներն ու իրավունքներնա, վոր մենք պիտի վոչնչացնենք ...

Բավական է, վորքան մենք համբերեցինք.

Բավական է, վորքան մենք լռեցինք ...

ՍԻՄՈՆ.— Փոնոգրանփ, կատարյալ փոնոգրանփ...

Բժիշկը սարքելա ու դրել ես տեղ ...

հարցնելը ամոթ չլնի, ես որ ենքները դուք վոր չեք հավանում, ձեր հավանած որ ենքները եդ վճրնա, վոր մենք չենք տեսնում.

ՇԱՔՐՈ.— Կա՞. վոր տեսնաս ...

ԳՐԻԳՈՐ.— Յեթե ես որ չկա, եդ չի նշանակում, վոր վաղը մյուս որը չի լինելու: Բանվոր դասակարգը իր որ ենքները ինքը կստեղծի:

ՇԱՔՐՈ.— Յեա գարմանում եմ. յանի ես աշխարհում, ել ձեզնից խելոք մարդ չկա. ես որ ենքները ինչի ամենքի համար լավա, իսկ ձեզ համար փիս:

Կամ թե չե, ես որ ենքներն ու իրավունքները վոր եդքան փիս ըլեր. ինչքան դուք եք կարծում, ձեզնից խելոք մարդիկ

հմի վաղուց ետ որենքները փոխելու մտաին մտածած ու մի բան արած կլնեին ...

ԳՐԻԳՈՐ.—Շատերն են մտածել և շուտ մտածողներից շատերն են գնդակահարվել շատերն են բանտերում ու աքսորներում տանջվել ու նահատակվել ...

ՍԻՄՈՆ.—Դասախոսութուներդ վերջացրի՞ք:

ԳՐԻԳՈՐ.—Դեռ չենք վերջացրել:

ՍԻՄՈՆ.—Դե. վոր չեք վերջացրել, շարունակեք. միթո՞մ եֆինտլյանի թութունի ֆարրիկում բանվորների առաջ կանգնած ճառ ես խոսում. Ճառախոսները կարծեմ ըսենց են սկսում: «Ընկերներ, Ռուսաստանի բռնակալ կառավարությունը ինչպես մի ծանր ու ճնշիչ լուծ ընկած ե մեր վզին և նրա ծանրության տակ տնքում ենք մենք բոլորս անխտիր... մենք աշխատավոր ու բանվոր դասակարգս մեք այս շլուտ բազուկներով հոյակապ պալատներ ենք կառուցում մեր արյունը ծծող տղրուկների ու վաժպիրի համար, մինչդեռ մենք հալածվածներս ու մոռացվածներս ընկած մութ ու խոնավ նկուղներում ցամաք հացի կարոտ որ ենք անցնում...»

ԲՈՂՈՐԸ.—Հա՛, հա՛, հա՛, իսկական ճառ եր...

ՇԱՔՐՈ.—Յես իմ աստված լավ սկսեցիր ու լավ ել վերջացրիր:

ՍԻՄՈՆ.—Սրանք դիփ ձեր բերնից լսված խոսքերա, հմի ձեզ եմ հարցնում. ձեզ դուրա գա՛լի...

ՇԱՔՐՈ.—Յանի դա ենենց խոսքեր ա, վոր մարդու դուր գա՛: Եդ խոսքերը յեթե մի ուրիշը լսի, քշերը կգան տեղաշորիցդ կհանեն շնքիդ տալով կտանեն ջանդարմսկի ուպրավլենին, դե տղա յես ու արի նրանցից ազատվի: Չե ախպեր, մենք մեր գլխից ձեռք քաշած ու ձեր եդ ճամփովը փնացող մարդ չենք:

Անջախ գլուխներս դինջ մենք մեզ համար արխային ապրում ենք, ինչ գործ ունենք դուր տեղը դավադարի ու խաթարալի մեջ խառնվենք:

ԲՈՂՈՐԸ.—Դրուտա ա ասում, ըսենց ել մենք մեզ համար հանգիստ ու դինջ ապրում ենք:

ԳՐԻԳՈՐ.—Ապրել ել կա, ապրել ել: Չեր և Գեվորգ Բաղ-

դանիչի ապրեկու մեջ մեծ տարբերություն կա:

ՍԻՄՈՆ.—Փիս աչքածակի նման, դուք հենց մի գլուխ ուրիշի ունեցվածքի վրա եք նախանձում: Յեթե դուք ուզում եք նրանց պես ապրեք, նրանց պես թագավորական պալատներում ու ամարաթներում փառավոր որ ու կյանք անցնեք, նրանց պես դուք ել ուտեք, խմեք, ֆայտոններով ու կառեթներով ձեր քեֆին արխային, ձեր սրտի ուղած վախտը դուրս գաք ու ման գաք, դուք ել նրանց պես գնացեք ջաններիդ ջափա տվեք, հալալ քրտինք թափեք, վոր դուք ել ունենաք:

ԳՐԻԳՈՐ.—Տո վողորմելի, հալալ աշխատանքով, հալալ քրտինք թափելով յեթե հարստանալու հնարավորություն լիներ, աշխարհիս յերեսին մենք ամենահարուստը կլինենք: Բայց ո՛ւր ե... ամենից շատ աշխատում ենք, ամենից շատ չարչարվում, տանջվում ամենից շատ արյուն-քրտինք թափում, վոչ որներս լավանում, վոչ կյանքներս փոխվում, ելի են սովածն ենք, ելի են տկլորը... իսկ նրանք, վոր աշխատանքից մի վերստ հեռու յեն փախչում:

ՍԱՄՈՆ.—Ելի գնացին եկան, նրանց յախիցը կպան. յես դարմանում եմ ի՞նչ եք ուզում նրանցից. ետքան ել մարդ անտղ ու հաց կլինի: Ախր նամուսն ել լավ բան է...

Նրանց հացով կերակրվեք, նրանց շվաքի տակ ապրեք, ելի դուք նրանց վրա խոսաք, նրանց վրա մուծաթ դնեք, սա ատուած վերկունի... Չե, ախպեր, ես վերջին ժամանակներս, դուք շատ խարաբ ելաք: Առաջ մաղուլ խելոք, նամուսով, արուսով տղերք եյիք, խաղեյնից սկսած, մինչև են պասլեղնի դվորնիկն ել ձեզ սիրում եյին, ձեզ հարգում եյին: Համա ինչ վոր եդ մեր դավոդի բժիշկն եկավ, դուք նրա մոտ գնալ դալ ունեցաք, դուք միանգամից փոխվեցիք. ել դուք մեր տեհած են առաջվա տղերքը չեք, ինչ վոր քամի ա մտել գլխներդ, խելքներդ թամամ կորցըրել եք, արուսներդ կտրել, ել վոչ մեծ ու պղտիկ եք ճանաչում, ե վոչ խաղեյնի պատիվը հասկանում, գլուխ եք բարձրացրել ու ինչ վոր անիրագործելի բաների մաւին մտածում...

ԳՐԻԳՈՐ.—Դրա համար դուք ուրախ պետք ե լինեք, վոր մենք դարերի ստրուկներս կյանքի անողոք հարվածներից սկսում

ենք ստափվել և մեր չարքաշ վիճակի բարեկաման մասին մտածել...

ՍԻՄՈՆ.— Փոնոգրափ, կատարյալ փոնոգրափ:

Տճ, ետ պարզ աշկարա գիտենք, վոր եղ ասածներիդ վոչ մեկն ել ա քու խելքի ու քու մտքի բանը չի, ուրիշից սովորած ուրիշից անգիր արած խոսքերով հւմն ես զարմացնում:

ՇԱՔՐՈ.— Դրանք դիփ բժշկի սովորացրած խոսքերն ա: Նա յե մեղավոր, նա յե սրանց բերանի կապը կտրել:

ՍԻՄՈՆ.— Յես զարմանում եմ, նրա մեջ սրանք ի՞նչ են տեսել, վոր եսքան հոգով մարմնով կպել են նրան: Ուսումնական վորա, մեծ բան եք կարծում: Ի՞նչ ուսումնականներ կան, վոր յերկու իշի գարի չեն կարողանում բաժանի: Կամ թե չի նա վոր խելքը գլխին մարդ լինի, կը գա ձեզ պես գյաղա-գյուղեքի հետ գլուխ կղնի՞... Ախր դուք ել վոր շաշ չլինեք, նրան կլսե՞ք, նրա փշած ստերին կհավատա՞ք: Բա դուք չեք մտածում, վոր եզ մարդը ես որ եստեղա, եզուց ովա իմանում հւրա գնալու կորչի, դուր տեղը ինչ եք ձեր հացին քացով տալի, խաղեյնի աչքիցը նկնում:

ԳՐԻԳՈՐ.— Տո վողորմելի, խաղեյնի աչքիցը մենք դրանով պտի ընկնե՞նք: Գլուխներս ել վոր նրա համար ծախենք, մատներս մոմ շինենք ու նրա առաջ վառենք՝ ելի միյեվնույնա, նա մեր թշնամին ե, մենք՝ նրա...

ՇԱՔՐՈ.— Են ոյինները վոր դուք եք բերում նրա գլխին թշնամի չե, հոգեհան հրեշտակ ել վոր դառնա, ելի քիչա: Համա ելի աստուծ կյանք տա նրան, ելի նրանք են, վոր համբերում, են, ելի նրանք են, վոր մեզ համար ցավում-մտածում են:

ԱՐՇԱԿ.— Նրանք մեզ համար ցավող ու մտածող պառուկներ չեն, նրանք մեր արյունը ծծող տղրուկներ են նրանք, վոր ճար ունենան, առավոտից մինչև լուս կրանացնեն ու չեն թողի, վոր մի ազատ շունչ քաշենք...

ՍԻՄՈՆ.— Ախպեր դե բուլա . ելի, լիժի ցավ հո չդառաք գլխներիս, խելոք եք, ձեզ համար վեր ընկեք, ի՞նչ եք կըպել խաղեյնի յախիցը ու ել պոկ չեք գալի, մեզնից ձեռ քաշեք ելի...

ԳԱՐԵԳԻՆ.—Մինչև ձեզ չհասկացնենք մեր ասածների ճշմարտությունը, թվա ձեզնից ձեռ քաշողը...

ՍԻՄՈՆ.—Ըհ, ակաս մական քոռ Մզոն եր գլխներիս պակաս: Դու յեւ վոր խաղեյին խրատող դուրս յեկար, ամեն ինչ դրստվեց: Ես տունը քանդվածները, կասես ժամում կանգնած «խոնարիցո ապրիցո» ըլի ասելիս, մեկը վերջացնում մյուսնա սկսում:

ՇԱՔՐՈ.—Զահլաներս տարան, գլուխներս քամեցին. եսքան եւ խոսալ կլնի, վոր սրանք են խոսում:

ԳՐԻԳՈՐ.—Դու եւ ես խոսում, այ վողորմելի: Մոռացել էս, վոր առաւիտները ենքան վաղ եյիր գալի, իրիզները ուշ գնում, վոր շարաթներով յերեխաներիդ յերեսը չեյիր տեսնում: Նրանք գիտեյին, վոր հայր ունեն, բայց նրան չեյին ճանաչում:

ՍԻՄՈՆ.—Տո տունը քանդված դե բոլա ելի, քանի խոսաս, բերանումդ լեզուս թե ջրադացի չախ չախ, առաւիտից կզան մինչև իրիզուն դո՛, դո՛, դո՛, բո՛, բո՛, բո՛, դո՛, դո՛, դո՛, բո՛, բո՛:

ԲՈՂՈՐԸ.—Հա՛, հա՛, հա՛: (ծիծաղ)

ՍԻՄՈՆ.—Պա՛, Պա՛, Պա՛, գլուխներս տարան ելի: Տո, վոր մենք չենք խոսում, ձեր նամուսին ի՞նչա յեկել: Ճաշից հետո դիփունանք խելքով խրատող դուրս յեկան: Մեկը թատրոնա հրավիրում, մեկը ժողովիս կանչում, մի ուրիշը գիրք ա առաջարկում կարդանք, կասես կարգալ վոր ուզենանք գրքերի տեղ չենք իմանում:

ԳՐԻԳՈՐ.—Սաղմոսի ու նարեկի նման գրքերի տեղը ի հարկե կիմանաք, վերցրեք կարդացեք ու կարդացեք:

ՍԻՄՈՆ.—Դուք վոր Մարքսի ավհաարանն եք կարդում, նրա համար ա խելքներդ ավելացել, վոնց չե:

ԱՐՇԱԿ.—Յեթե չի ավելանում, գոնե չի յեւ պակասում:

ՍԻՄՈՆ.—Լավ, լավ, ձեր փորացավը իմանում ենք, համա դուրա, վոչինչ չի ըլի, մեզնից ձեր ժողովներին յեկող չի լինեսու, հո լսեցի՞ք, դե հմի որեսի գենը ինչքան ուզում եք խոսացեք, մի բան, վոր ձեր ասակները ըստեղից մտնելուա, ըստեղից դուրս գա:

(մասի ծայրով իր ակաճօճները ցույց տալով)

ԳՐԻԳՈՐ.— Յանի եղ զահրամարը գլուխն, թե տակը ճըղ-ված մեշոկ, վոր մի կողմից մտածը մյուս կողմից դուրս ա գալու:

ԲՈՂՈՐԸ.— Հն, հն, հն: (ծիծաղ)

ՍԻՄՈՆ.— Եղ լեզուներդ ձեր գլխին թե մի ոյին չ'բերի, բաս յես Սիմոնը չլնեմ: Կտեսնեք ելի, լպստածներ...

Տ Ե Ս Ի Լ 5

ՆՈՒՅՆՔ, ԳԵՎՈՐԳ, ՍՏԵՓԱՆ ՅԵՎ, ՍՀԱԿ

ԳԵՎՈՐԳ.— Ինչպես գող կտավի նման դես ու դեն նայելով ներս ես մտնում, կարծում ես քեզ տեսնող չկան: Հրես մի ժամե գործը սկսվել է, իսկ դու նոր ես գալիս: Ստեփան, սրա վրա կես որ կնշանակես:

ՍՀԱԿ.— Խաղեյին, տասն հինգ ըոպե եմ ուշացել, իսկ իմ պարտքս ըլի յերկու սհաթվա գործ առաջ գցեմ:

ԳԵՎՈՐԳ.— Դու պարտավոր ես այդ միշտ ել անել. և դրա համար ել դու ոտհիկ ես ստանում:

ՍՏԵՓԱՆ.— Յես ձեզ հազար անգամ ասել եմ ժամանակին յեկեք. իսկ դուք իմ ասածը չեք լսում, և չեք հասկանում:

ԳԵՎՈՐԳ.— Ասածդ յերբ չեն հասկանում, տուգանքը նըրանց հասկացնել կտա:

ՍՀԱԿ.— Խաղեյին, ես մի անգամը բաշխի. յես դիտմամբ չեմ ուշացել. պատահմունքա, քնով եյի ընկել:

ԳԵՎՈՐԳ.— Լավ արդարանալու միջոց եւ ինչո՞ւ վաղ չեա քնում, վոր ժամանակին վեր կենալ կարողանաս: Յերեկոները ինչով ես զբաղվում, մի գուցե քո միտքն ել է ծովել. դու ել ես ժողովներ գնում:

ՍՀԱԿ.— Չե խաղեյին. Աստուծ, յերկիրնք յես ժողով չեմ գնացել, ժողով գնացողները ուրիշներն են, են տունը քանդվածները զավոդից, վոր դուրս են գալիս ել տան յերեսը հո չեն տեսնում: Մի գլուխ ժողովում են ընկած:

ԳԵՎՈՐԳ.— Ես քեզ զգուշացնում եմ, ուրիշներին չլսես. նրանց ասածներին չհավատաս, նրանք աչքիցս ընկած են, քեզ ել ուզում են գցեն: Գնա, ուշացածդ ներում եմ:

(Սեփանի հետ զուրս և զնում)

ՄՀԱԿ.—(Գլուխ, և ալիս զնում)

(Սիմոնի Շաբույի կողքին նստում յեվ աշխատում)

Տ Ե Ս Ի Լ 6

ԲԱՆՎՈՐՆԵՐ, ՄԻՆԱՍ ՅԵՎ ՀԵՏՈ ԱԲՐՀԱՄ

ՄԻՆԱՍ.—Բժիշկը եկելա, ով ուզումա թող տենա:

(Նույնը մի բանի տնգամ մյուս բաժանմունքներում կըրկնում և

ՄՀԱԿ.— Չգիտեմ ինչա պատահել, կողքս շամփուրի նման ծակումա. նաֆաս չեմ կարողանում առնի: Գնամ տեսնեմ բժիշկը ինչ կասի:

(Գնում և)

ԱԲՐՀ.— Բարով ձեզ տղերք.

ԲՈՂՈՐ.— Այ ասու բարին, բարով յեկար.

ԱՐՇԱԿ.— Արրհամ ինչ արիր.

ԱԲՐՀ.— Ինչ պտի անեմ. դեղի փողը չեն տալիս, գործաբանիցն ել դուրս են անում: Հիվանդութունս մի կողմից, տանը յերեխանցս հոգսը մյուս կողմից, ինձ տանջում սպանումա ... Թե ինչա լինելու իմ վերջը, յես չգիտեմ:

ԳՐԻԳՈՐ.— Քու վերջնեկ նույնա լինելու ինչպես շատ ուրիշներին:

ԱԲՐՀ.— Ես կեղտ ու մրի մեջ գիշեր ցերեկ տանջվիր չարչարվիր, քունդ, հանգստութունդ խանգարիր. ամբողջ կեանքդ սոված ծարավ որդ մթնեցրու, ես խոնավ պատերի տակ, ես անտեր դազգիահների վրա միսդ ու ոսկորդ մաշի, և վերջումը կոնիցդ բռնած, շնքին տալով դուրս շարտեն ... սև ըլի բանվորի որն ու կյանքը ...


Վոր ծնված որից աչք ենք բաց անում, մի լավ որ չենք տեսնում:

ԱՐՇԱԿ.— Կտեսնենք, Արրհամ, կտեսնենք, եդ լավ որը մեզնից շատ հեռու չի, նրան շուտով մենք ել արժանի կլինենք:

ԱԲՐՀ.— Ախ եդ որին դուրբան. ետ սրը յիս մեռած, գերեզմանումս պառկած ել վոր ըլիմ գործի հրավերող գու-

A 38898

11876



դոկի են քաղցր ու անուշ ձենը լսելուն պես, յես իմ գերեզմանիցս հարուժյուն կանենմ թեկուզ տասնութ ժամ աշխատելու համար նորից ես գործարան կվազեմ...

Ես դժողքը կանչող սև դուդոկի ձենը լսելուց, յես վոր ամեն անգամ անիծել և միշտ չո՛ռ, զահրումար եմ ասել՝ են լավ որերին մեզ համար ազատություն ու հանգստություն բերող կարմիր դուդոկի ձենը լսելուց ջա՛ն, ջա՛ն կը կանչեմ,
(գնում ե բժեկի մոտ, իսկ Սեակը բժեկի մոտից վերագառնում ե)

Տ Ե Ս Ի Լ 7

Յուլյնի յեվ Սեակ

ՍՀԱԿ.— Ախպեր, յես եդ բժշկին սիրեցի, երևում ա վոր նա չավ մարդ ա: Նրա ասածները դուք թարս եք հասկացիլ: Նրա խոսալը, նրա համեսա, մարդավարի վերաբերմունքը, աստո՞՞ գիտե՞ նա, քեֆս եկավ:

ՍԻՄՈՆ.— Յես վոնց որ տեսնում եմ, բժիշկը սրան ել ա կնքել՝

ԲՈՂՈՐԸ.— Ըտենցա յերևում:

ԱՐՇԱԿ.— Եդ բժիշկը ձեզ ելա կնքելու, խելքներդ սւրա.

ՇԱՔՐՈ.— Եդ տնաքանդը, դրուսա վոր դեր, հո չի՞ վոր հասնողին կնքում ա:

ԲՈՂՈՐ.— Հա՛, հա՛, հա՛... (ծիծաղ)

Տ Ե Ս Ի Լ 8

Նուլյնի, Գեվորգ, Սեպիան յեվ Սերհամ

ԳԵՎՈՐԳ.— Ձեր դալմադալի ձենը փողոցումի ե հասնում: Դուք ձեր ոտնիկը խոսելու համար եք ստոնում, թե գործ շինելու համար:

Անաստոթներ... սովորել եք ամբողջ ուրը դուռնչ-գնչի տալ և խոսելով որ մթնեցնել:

ԱՐՇԱԿ.— Մի բոպե վոր մեր խոսալուն վրա հասուք, գուք կարծում եք, վոր մենք եսանդ ամբողջ ուրը խոսում ենք...

ՍՏԵՓԱՆ.— Եթե չիք խոսում, գործը ել չեք շինում...

ԱՐՇԱԿ.— Իսկ մեր գործը երևի դու եո շինում, պարոն...

ԳԵՎՈՐԳ.—Ձայնդ կարիր, անիրավ, այս անգ միայն դու
չես, բացի քեզնից ուրիշներ ել կան:

Ձեռիցդ երկու կույկկի գործ չի դուրս գա, իսկ խոսելիս յեր
կու արշին լեզու կհանես (գառնալով ՍԲԵՐԿԱՄԻՆ) դու ի՞նչի եկար
ցցվեցիր առաջս, յես քեզ ասացի վոր փող չպիտի տամ:

ԱԲՐՀ.—Ձեր կամքն ե, կարողեք և շտալ՝

ԳԵՎՈՐԳ.—Իու համարձակ ես խոսուեմ:

ԱԲՐՀ.—Քաշվելու ի՞նչ ունեմ, փառք ասուեմ, գողութուն,
ավագակութուն չեմ արել:

ԳԵՎՈՐԳ.—Իու յերազ ես տեսել ինչե:

ԱԲՐՀ.—Մարդ ցերեկը երազ չի տեսուեմ. տասնհինգ տա-
քի ձեր գործարանում աշխատելուց հետո, հիվանդացել եմ և վոտ-
քի վրա կանգնել չեմ կարողանուեմ, միջոց ավեք ինձ բժշկվելու:

ԳԵՎՈՐԳ.—Հիվանդները կարող են գնալ հիվանդանոց, սա
գործարան ե, հիվանդանոց կամ անկեղանոց չե:

ԱԲՐՀ.—Յերբ յես եկա ձեզ մոտ աշխատելու բոլորովին առ-
ողջ եյի, բայց գործարանի պայմանները, նրա խոնավութունը
հիվանդանալուս պատճառ են դարձել, հետևապես դուք պարտա-
վոր եք ինձ բժշկել, կամ բավարարութուն տալ և ապա հեռաց-
նել...

ԳԵՎՈՐԳ.—Սուտ ես ասուեմ, իմ գործարանի պայմանները
վատ չեն, և վոչ ել խոնավ, դուր տեղը պատճառներ մի վորոնի
և վոչ ել բավարարութուն ստանալու հույս ունեցիր: Հրես յես
քու ներկայությամբ սրանց կհարցնեմ. Սիմոն առաջինը գու-
ասա:

ՍԻՄՈՆ.—Ինչ ասեմ, խազեյն. տասնութ տարիս յես ես
գործարանում աշխատուեմ եմ, դեռ չեմ հիշուեմ, վոր յես հիվան-
դացած լինեմ:

ԳԵՎՈՐԳ.—Իսկ յեթե գործարանիս պայմանները վատ լի-
նեյին և խոնավ դու յել կհիվանդանայիր այնպես չե: (ՍԻՄՈՆԷ
ՂԼԽՈՎ ՂՐԱԿԱՆ ԱՇԱՆ Ե ԱՆՈՒՄ) Ահա տեսնուեմ ես: Սպասիր
մի սերիշին ել հարցնենք, յես համոզված եմ, վոր նա յել նույնը
կհաստատի. այո, նրանք քեզ պես ստախոս չեն. նրանք հշմա-
րիար կասեն: Շտքրո, ասա տեսնեմ դու ի՞նչ կասես:

ՇԱՔՐՈՒ.— Խաղեյին, յես ել են կասեմ, ինչ վոր Սիմոնն
ասաց:

ԱՐՇԱԿ.— Իսկ յես հակառակը կասեմ: Այո ձեր գործարանի
պայմանները վատ են և հակաառողջապահակա՞ն, հիվանդութեան
դեպքը սա վոչ առաջինն է, և վոչ ել վերջինը. շատերն են այս-
տեղ հիվանդացել և դուրս շարտվել, նույն վիճակը մեզ է սպա-
սում: Իսկ դուք ճամարտախոս տասնութ տարվա աշխատող վար-
պետներ, յեթե համարձակութուն չունեք իսկութեանը ասելու,
դոնե լռելու քաջութուն ունեցեք:

ԳԵՎՈՐԳ.— Ծածկիր գլխարկդ և դուրս կորիր. անիրավ,
դու յես սրանց խելքից հանողը: Դե, շո՛ւտ... Առանց ուշանալու:
(Արցակը խալաքը ետնում է գլխարկը ծածկում)

ԱՐՇԱԿ.— Ընկերներ...

ԳԵՎՈՐԳ.— Կորիր, դու այստեղ այլևս ընկերներ չունես,
դուրս կորիր: (Իրում է) Ստեփան, գնա սրա հաշիվը տուր և
ճանապարհ դիր:

(Ստեփանը իրելով դուրս է քանում)

ԱՐՇԱԿ.— Թող յես ինքս կգնամ: (դուրս եմ գնում)

ԳԵՎՈՐԳ.— Անիրավ, դուք շատ եք լրբացել, ձեր չափը,
սահմանը կորցրել: Մեծի պատիվ, հարգանք ասած հասկացողու-
թյունը ձեզ համար այլևս գոյութուն չունի: Բոլորդ լեզու եք
առել և իրավունք եք պաշտպանում...

ԳԱՐԵԳԻՆ.— Յերբ նա վոտնահարվում է, այո պիտի պաշտպա-
նենք...

ԳԵՎՈՐԳ.— Դեհ, հիմա ել սա: Տո անիրավ, դու չտեսար
ընկերոջդ ինչի համար դուրս անի, դու ել ես ուզում գնաս
դուրսը սոված ծարավ զկատամ:

ԳԱՐԵԳԻՆ.— Աշխատավոր մարդը, յերբեք սոված չի մնա,
մեր գնամ աշխատեմ, քրտինք թափեմ, վոր մի կտոր ցամաք
հացի փող չստանամ... Յեթե կուզեք ճիշտը իմանալ, բանվորը
չե, վոր սոված կմնա, այլ նա, ով ուրիշի աշխատանքն է ուտում
ուրիշի քրտինքով ապրում...

ԳԵՎՈՐԳ.— Չայնդ կտրիր, լակոտ: Դու չհամարձակվես իմ
ներկայութեամբ այդպիսա խոսել: Յես ձեր ընկերը, ձեր բարեկամը

չեմ, յես ձեր տերն եմ, ձեր գլխի տերը. ինձ մոտ ձայն-ծայտուն հանելու դուք իրավունք չունիք: Դե քանի վոր քու գեմքդ եւ պարզվեց, դու յել ծածկիր գլուխդ և դուրս կորիր...

ԳԵՎՈՐԳ.— Դուրս եք անձեմ, իրավունք ունեք, բայց վայ այն որը, յերբ այդ իրավունքները ձեզնից կխլվեն... Ընկերներ, անա տեսնում եք ի՞նչ ե կատարվում ձեր շուրջը, ձեր աչքի առաջ, սա մի հայելի յե վորտեղ ձեր պատկերն ե փայլում...

ԳԵՎՈՐԳ.— Դուրս կորիր, դու այլևս իրավունք չունես այս տեղ խոսելու: Անպիտան, խառնակիչ... (մինչեզ ցեմքը թեզից քանած քանում ե) Ստեփան, սրա հաշիվն ել տուր և ճանապարհ դիր (հրում ե յեզ գուրս գցում) անիրանի, դուք շատ եք լրբացել. հետներտ խոսել չի լինում: Բայց դուք մեղավոր չեք. դիտեմ ով ե այդ բոլորի պատճառը: Նաե, վոր ձեր մտքերը պղտորում ե, նա ե, վոր իմ մասին զանազան հերհյուրանքներ ե տարածում, և դուք նախորոք չիմանալով նրա հետին մտքերը՝ միամտաբար հետևում ենք նրան և հավատամ նրա ասածներին: Դուք ձեզ հաշիվ չեք տալիս և մի բոպե չեք մտածում, վոր ձեր խաղեյինը ուրիշ խաղեյինների նման չե. նա բարի ե նրա մտածմունքը միշտ ձեր մասին ե լինում: Դեմ համար եմ հիմնել այս դործանանը, Դեմ համար հավաքել գլխիս այս անգին զալմաղալը յեթե վոչ ձեզ և ձեզ նման խեղճ ու թշվառ բանվորներին կերակրելու համար...

ԱԲՐՀ.— Վոչ. դուք ճիշտ չեք ասում: Ամբողջ որը ճորտի նման աշխատելուց հետո, մի կտոր ցամառ հաց շարտել մեր առջև և դա բարեգործություն համարել, վոչ, դա բարեգործություն չե, այլ շահագործում: Նման բարերարների կարիքը մենք չենք զգում, այդտեսակ բարեգործություններ նրանք կարող են և չանել...

ԳԵՎՈՐԳ.— Դու գես այս տեղե՞ս, և այդ համարձակ խոսողը դու ես: Դու ել դուրս կորիր, դու ել ինձ հարկավոր չես.

ԱԲՐՀ.— Յերբ առողջ եյի, ձեզ հարկավոր եյի. իսկ այսուր յերբ այս ապականված փոշելից ոգում արյուն-քրտինք թափելով կյանքս փչացրի, առողջությունս կորցրի այլևս ձեզ հարկավոր չեմ, դուրս եք գցում ինչպես մի անպետք փալառ... Այո

դրութեան մեջ յես ուր գնամ, թվ ինձ կնդուեսի: Երեխաներս տանը սոված ծարավ ինձ են սպասում, գնամ նրանց ինչ ասեմ նրանց ինչ պատասխան տամ... Գնան ջուր թափվե՛ն, դուք ասարված չունե՛ք, դուք խիղճ չունե՛ք, դուք վոր ամիսը մի անգամ արժան չեք համարել մտնել գործարանը, ես որ դուք հազարներ ռ միլիոնների տեր եք դառել... Իսկ յես վողորմելիս, վոր ամբողջ տասնհինգ տարի շարունակ ես կեղտ ու մրի մեջն յես փտել, ես թութունոտ դազգյահների վրա կյանքս ու հոգիս մաշել, ես որ ես տասնհինգ կոպեկ փող չունեմ՝ տանեմ հացի տամ. յերեխաներս կերակրեմ... Ահա տեսնում եք, ես վկայականը սրանով յես իմ բավարարութունս կստանամ, այն կստանամ... (ԳՆՈՒՄ Ե)

ԳԵՎՈՐԳ.—Ահա թե ինչն է նրան լեզու տվել: Սպասի՛ր դու վահան. յես քեզ ցույց կտամ... (ԳՈՒՄ Ե ՎՆՈՒՄ)

Տ Ե Ս Ի Լ 9

ԲԱՆՎՈՐՆԵՐԸ ԱՌԱՆՑ ԳԵՎՈՐԳԻ

ԳՐԻԳՈՐ.—(ԲՈՒՆԵՅԳՈՎ խոսում է զազգյահին) Վճ. Վճ. համբերել այլևս անկարելի է: Ընկերներ!. ա. բայց ուրեն, այստեղ ընկերներ չկան... (ՎՆՈՒՄ Ե ՄՅՈՒՄ ԲՈԾԹԵՄՈՒՆԵՐԸ)

ԲՈՒՆԵՅԳ.—Հա. հա. հա... (յերկար ժամանակ ծվծաղում է)

ՇԱՔՐ.—Ընկերները հիմի թող վիզները քորեն, հա. հա.

ՄԻՄՈՆ.—Յես չեի ասում, վոր սրանց լեզուն իրանց գլխին խաթա ա բերելու.

ՄԱՀԱԿ.—Մաղալուն են եր, վոր են մի հոգևորը վոնց դըրաղը քաշվել, ձենը փորն եր դցել, ասա սկի խոսանց, ձեն ծըպտուն հանեց...

ՇԱՔՐՈ.—Վոնց ձեն հաներ, ձեն հանելու համար չե՛ր, վոր են յերկուսին դուրս մարեց: Ի՞նչ եք կարծում, խաղեյինը դրանում մեղավորա՛:

ՄԻՄՈՆ.—Սկի յիլ մեղավոր չի: Ախր ի՞նչնն մտածում. ում հետ են սպոր անում. ում հետեն քյալլա-քյալի տալի: Են մարդն էլ վճր որվ ա համարա մեզ հաց տալիս սլահում, վոր իրավունք չալիաի ունենա մեզ վրա խոսալու: Նա մեր խաղեյիննա, մեր

դիտի տերնա, մեզ վրա նա կխոստ ել, կչարանա ել, յերբ քեզիք
 Կա կբանացնի, յերբ չուղենա կոնիցդ բռնած շինքիդ տալով
 դուրս կանի...

ԲՈՂՈՐԸ.— Մարդը խաղեյինա, իրավունք ունի:

ՍԻՄՈՆ.— Դու տես ինչ տեղնա հասել, վոր խոսքի տակին
 զլիտին միշտ ենին ասում, վոր զավոդը մերնա, աշխատանքը
 մերնա, նրա տերն ու տիրականն ել մենք պտի ըլենք:

ՇԱՔՐՈ.— Եդ ասողներից մեկն ել նա չէր, ինչի եր լալկել,
 սովորել են մեզ ժող մեծ մեծ բորոացնեն, համա խոսքը մեր
 մեջ մնա, լավ ազատվեցինք:

Գլուխներս անջաղ մի դալմադալից կգինջանա:

ԲՈՂՈՐԸ.— Ձե, յախաներս դրանցից լավ թափ տվինք:

ՍԻՄՈՆ.— Են դուրս արածներին հմի տենանք բժիշկը հա-
 ցա տալու պահի:

ՇԱՔՐՈ.— Ինքն իր համար շատ ունի, մնաց դրանց ել տա:

ՍԻՄՈՆ.— Դե վոր չունի, ել ռւրա խալխին զլխահան անում,
 ու հացից զրկում: Են դուրս արածների տեղը յես վոր ըլեմ, կը-
 դնամ եդ բժիշկի յախիցը կբռնեմ, ենքան կտամ, վոր իր ասած-
 ները ել մոռանա:

ՍՀԱԿ.— Արա Մինաս, թութուն բեր, գիլգի բեր:

(Մինասը ԵՏԱԿ ԵՏԱԿ մտնում է)

ՄԻՆԱՍ.— Ի՞նչ վախտի թութունա, ի՞նչ վախտի գիլգիա-
 նրեն են մեկել ադելենում զարաստովկա են արել, դուք կանդ-
 նել թութուն եք ուզում...

(Ներսից բանվորները յեվ բանվորուհիները ազակով ներս
 են մտնում)

Տ Ե Ս Ի Լ 10

(Նույնի, Գրիգոր յեվ մյուս բաժանումներում աշխատող
 բալոր բանվորները:)

ԲՈՂՈՐԸ.— Գործադուլ, գործադուլ...

ՍԻՄՈՆ.— Ի՞նչ գործադուլի ժամանակն է:

ԲՈՂՈՐԸ.— Ամենու հարմար ժամանակն է, գործադ ըլ, գոր-
 ծադուլ...

ՇԱՔՐՈՒ.— Դուք գովել եք, դուք խելագարվել եք, ի՞նչու, մենք եստեղ որվա ուտելու հաց չունենք, դուք գործադուլի համար եք մտածում: Խալխին սովից կոտորելու միտք ունե՞ք:

ԳՐԻԳՈՐ.— Իսկ վոր ամբողջ ժամանակ աշխատում ենք շատ կուշտ ենք լինում: Յես ձեզ հավատացնում եմ, վոր մենք միշտ քաղցած ենք, և միշտ սոված... Ամբողջ տարվա մեջ մենք միայն յերկու որ կուշտ հացի կնստենք. դա դատկին և լինում և ջրորհնեքին, վորովհետև քարի՞ մարդիկ այդ տոնական որերումն են մեզ մտաբերում և իրենց լիառատ ու ճոխ սեղանի փըշրանքները մեր առաջ թափում: Բայց դուք չպիտի մոռանաք, վոր փողոցում թափառող անտուն ու անտեր շներն և այդ որերում կուշտ են լինում...

ԲՈՂՈՐԸ.— Ճիշտ ե... ճշմարիտ ե...

ԳՐԻԳՈՐ.— Յեթե ճիշտ ե, յեթե ճշմարիտ ե, ի՞նչու եք լռել... Ձեր բողոքը, ձեր տանջանքը, ձեր տառապանքը հայանելով միթե մենք մեղավոր կլինե՞նք... Միթե մեր ճակատագիրն է՝ միշտ և ամենուրեք զրկանք ու հալածանք կրել և լուսթյամբ տանել...

ԲՈՂՈՐ.— Վոչ, մենք լռել չենք կարող, մենք կկոպենք, մենք կբողոքենք...

ՇԱՔՐՈՒ.— Ինչո՞ւ կոպել, ի՞նչու բողոքել, խնդրանքով ամեն ինչ կարելի յե անել:

ԳՐԻԳՈՐ.— Մենք շատ ենք խնդրվել, բայց վո՞ր խնդիրքներս ե հարգվել: Հիշում ես այն որը, յերբ մոտեցար վորդուդ թաղման համար ավանս խնդրելու, վրադ այնպես գոռատին, վոր ասելու խոսքդ նույնիսկ մոռացար: Վոչ, մենք մեր իրավունքը վերականգնելու համար նրանցից դթություն, վողորմածություն աղերսող աղքատներ չենք... Մենք գործադուլ ենք հայտարարում և կովի միջոցով մեր պահանջները դնում...

ԲՈՂՈՐԸ.— Յերկարացնելու ժամանակը չե...

ԳՐԻԳՈՐ.— Թող այդպես լինի, հարցը դնենք քվեարկության ով համաձայն ե գործադուլին, Թող մատ բարձացնի:

(Բացի Սիմոնից. Շախայի՞ց յեվ Սիակվց բոլորք մաս եմ բարձրացնում)

Գործադուլի հարցը վճարած և...

ԲՈՂՈՐԸ.— Գործադուլ... Գործադուլ...

Տ Ե Ս Ի Լ 11

ՆՈՒՅՆՔ, ԳԵՎՈՐԳ ՅԵՎ ՍՏԵՓԱՆ

ԳԵՎՈՐԳ.— Այս ի՞նչ է նշանակում: Գործը թողած դուք այդ մարեք գնում:

ԳՐԻԳՈՐ.— Այնտեղ, մեր դուրս արված ընկերների մաս...

ԳԵՎՈՐԳ.— Բայց ի՞նչու: Յես ձեզ դուրս չեմ արել:

ԳՐԻԳՈՐ.— Իսկ ի՞նչով ենք յերաշխավորում, վոր վաղը կամ մյուս որը մեզ նույնպես դուրս չպիտի անեք ... ուրեմն մենք մեր կամքովը հեռանանք ... իսկ յեթե դուք այդ չեք ուզում, տվեք մեր այս պահանջները, ընդունեցեք մեր դուրս արված ընկերներին և մենք ստիպված կլինենք մնալ ... (ճալիս է պահանջաբերքը, Գեվորգը վերցնում է լուս կարգում յեվ ետև կարծ կաթաղած կերպով քուզքը պահռռում):

ԳԵՎՈՐԳ.— Սրանցից և վոչ մեկը:

ԳՐԻԳՈՐ.— Ընկերներ մեր պահանջը չհարգվեց. այդպես ել պիտի լիներ ... ինքնակամ կերպով նրանք մեզ վոչինչ չեն տվել և չպիտի տան ... Նրանք մեզնից միայն խլել գիտեն, իսկ տալու մասին նրանց չեն մտածել և չեն ել մտածում ... Մեր կռիվը՝ կռիվը. մեր պահանջը՝ պահանջ ... Գործադուլը մենք այսոր սկսում ենք և մինչև վերջ կտանենք ... «Մեկը՝ ամենքի և ամենքը՝ մեկի համար» թող այս լինի մեր նշանաբանը ...

ԲՈՂՈՐԸ.— Գործադուլ, գործադուլ ...

(Բոլորը գնում են)

ՎԱՐԱԳՈՒՅՐ

II ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Բեմը ներկայացնում է Գեվորգ Բազդանիչի տունը և բակը: Բեմի խորքում աջ կողմը Գ. Բազդանիչի տան դահլիճն է. դուռը և յերկու պատուհանները նայում են դեպի պատշգամբ, վորտեղից աստիճաններով իջնում են բակը: Պատշգամբը կահավորված է կիսայեվրոպական թեթեվ կահկարասիներով: Բակի խորքում

յերևում ե գործարանի կառնարածե դուռը, դռան նակաաին յերկար ու մեծ ցուցանակ, աջ ու ձախ լուսամուտներ և ասնիքի վրտ բարձր ձիւնեկույզ:

Գործողութիւնը կատարվում է բակում և պատշգամբում:

Տ Ե Ս Ի Լ Ի

Մ Ա Ր Գ Ա Ր

(Սպիտակ ֆարթուկը կապած, բրդե գուլպաները և չուսաները հագին, կահկարասիներն և ուղղում և նրանց վրայի փոշի սրբում):

Մ Ա Ր Գ Ա Ր. — (յերգում է)

«Բաղալո ջան Բաղալո

«Շաքարի շիր Բաղալո

«Չեր բաղչի ծառի նուշը

«Պահեմ Հայկուշի թուշը

(Յ.յս տունը յերգելուց հետո նույն յեղանակով շարունակա-
նակում է մտնալ):

Մարդ շուն ըլի, գել ըլի, հարուստի տանը նոքար չլնի: Արդարես թե մեղավոր, հասնողը գլխիդ դմփացնումա: Բանվորները զարաստովկա անեն ու չգան բանելու, նոքարնա մեղավոր: Աղջիկ պարոնի շորերը մասիսկան չափսովը չկարի, նոքարնա մեղավոր: Կուխնումը են անտեր մկները բզբզեն, մուրաբի բանկաները վեր դցեն կուտրեն, նոքարնա մեղավոր: Են դահբմար քամին փչի քուշի ֆանարը հանգցնի, նոքարնա մեղավոր: Շունը կապած տեղից դուրս պրծնի՝ խալխին՝ գզգզի, նոքարնա մեղավոր: Մի մենծ յերկրաշարժ ըլի, աղի տունը իբա գլխին քանդվի, ելի նոքարնա մեղավոր: Ախր նոքարը ի՞նչ մեղավորա. ինչ քարը առ նա գլխին, վճր ջուրն ընկնի: Մի յերկու շահիփող են տալիս, են ել տասն անգամ քնթներովս են հանում: Հետո ասում են թե խալխը դինջ չի մնում, զարագ-ասովկա են անում: Ախր վճնց չանեն:

Սաղ որը վորսկան շան պես դես ու դեն եմ վազում
ձերթ չի, տանը ջոկ են բանացնում, կուխնումը ջոկ-

Աստուծո՞ղի տենա ես հարուստների սրտում մի ետքան սովեատ չի մնացել, (մասի ծայրը ցույց տալով) սրանց ձեռքին հոգիս դուրս աշկել, ել հարաքաթ չի մնացել վռտներումս: (ճեսում է բազկարուքն) ուխտայ, ես զահրմար կրեսլի վրա նստելը ինչ գինջաբլում է ... կասես հոգիս արքայության մեջ տեղում պաղածը լի: Ախպեր, տեսնում եք ես հարուստներն իրանց փթած ջանի զադրը վոնց են իմանում...

(Գրուից վոսֆի ձայն է լսում յեվ իսկույն վոսֆի է կանգնում, իր գործը շարունակում)

Տ Ե Ս Ի Լ 2

Մ Ա Ր Գ Ա Ր, Գ Ե Վ Ո Ր Գ Յ Ե Վ Ս Տ Ե Փ Ա Ն

Գ Ե Վ Ո Ր Գ.— Այդ համառ լակոտները թող լավ իմանան, վոր յիս վորքան բարի, նույնքան և չար եմ, յեթե նրանք լսւ բարկությունս կրերեն, ես ամեն միջոցի կդիմեմ և նրանց արժանի պատիժը կտամ: Կատակներ ոնել յես չեմ սիրում:

Լսիր Մարգար:

Մ Ա Ր Գ Ա Ր.— (մի կողմ) Տեր դու փրկյա ի չարե ...

Գ Ե Վ Ո Ր Գ.— (մոտենում է յեվ ապսակում) Տո հայվան, քեզ հետ մարդ ե խոսում թե չե: Անիրաւ, դու ել ես լրբացել, աչքերդ կհանեմ, կաշիդ կմաշկեմ: Լսիր, բանվորները յեթե գալու լինեն նորս չթողնես: Դե գնա կորի:

Մ Ա Ր Գ Ա Ր.— Ելի լավ պրծա: (գնում է)

Գ Ե Վ Ո Ր Գ.— Լսիր Ստեփան, մի հայտարարություն գրիւր և կայցրու գործարանի դռանը, վոր յես ժամանակավորապես գործարանը փակում եմ և գնում արտասահման:

Ս Տ Ե Փ Ա Ն.— Գեվորգ Բաղդանիչ, դա լավմիտք ե. այդ ուղղությամբ յես վաղուց ե ինչ մտածում եմ:

Գ Ե Վ Ո Ր Գ.— Մտածելը բավական չե. հարկավոր և գործնակա՞ն միջոցներ ձեռք առնել: ահագին փաստներ ենք կրում: Գործադուլը մինչև յե՞րբ պիտի շարունակվի: Բանվորը ձկան որինակի մի բան եինք կարծում, վոր ինչպես ձուկը ուսանց ջրի հյանք չունի, նույնպես և բանվորն առանց մի որ աշխատելու հյանք չպիտի ունենար, քայց փորձը ցույց է տալիս վոր դա:

այդպես չէ: Վոր նրանք կարողանում են ավելի յերկար գիճա-
նալ, քան այն՝ վոր մենք յենթադրում եյինք:

ՄՏԵՓԱՆ.—Մեր յենթադրությունը սխալ չեր լինի, յեթե մի
ուրիշ հանգամանք չգար գործադուլի յերկար տևելու միակ և
զլխավոր պատճառ չհանդիսանար: Գեվորգ Բաղդանիչ յես նոր
իմացա, վոր իբր թե մի քանի ուրիշ գործարանի բանվորներ
սերտ կապ ունին մեր բանվորների հետ: Յեվ վոր նրանք գաղտնի
ժողովներ են գումարել և վորոշել իրենց ստացած ոռճիկի մի
վորոշ տոկոսը հատկացնել մեր գործադուլավոր բանվորներին
ոգտին:

ԳԵՎՈՐԳ.—Ահա թե ինչ: Բայց դու այդ ի՞նչպես կարողա-
ցար իմանալ:

ՄՏԵՓԱՆ.—Միամիտ մարդկանցից ամեն ինչ կարելի յե
իմանալ: Բավական է մի քաղցր հայացք. կեղծ ժպիտ, ոռճիկնե-
րի ավելացման խոստում և այնուհետև ձեր առջեվ կբացվի
գաղտնիքների մի ամբողջ շարան:

ԳԵՎՈՐԳ.—Գաղտնի ժողով, հեղափոխական կապ, ոռճիկ-
ների վորոշ տոկոս... չէ, Ստեփան, սուտ է չհավատաս: Այդ ան-
պիտան բանվորներն իրենք են ստեղծում այդ շինծու լուրերը
և դիզամամբ տարածում...

ՄՏԵՓԱՆ.—Ա՛, վորպեսդի մենք լսենք և զիջենք նրանց
պահանջները, հասկանալի յե, հասկանալի...

(Դրսից աղմուկ)

ԳԵՎՈՐԳ.—Ստեփան, մի գնա տես ես ի՞նչ աղմուկ է:

ՄՏԵՓԱՆ.—Յերևի բանվորներն են: (Վախեցած այս ա-
յն կողմը նայելով, մոտենում է լուսամուտին):

ԳԵՎՈՐԳ.—Դե, ել ի՞նչ ես կանգնել, յեթե բանվորները լի-
նեն նրանք վրեժխնդիր լինելու համար կլինեն յեկած: Ել մի
ուշանա, գնա, գնա գրասենյակից հեռախոսով վոստիկանության
հայտնիր, թող այս բոպեյիս նրանք պահակներ ուղարկեն...

ԽՈՒՐԻՑ ԼՍԿԱՄ Ե ՍԻՄԻՈՆԻ յեվ ՄՊՐԳԱՐԻ (անընչ)

ՍԻՄՈՆ.—Թ՛ող.

ՄԱՐԳԱՐ.—Չեմ թողնի չէ, աղեն ԽՈՒՐԻՑ չթողնաս.

ՍԻՄՈՆ.—Յես քեզ ասում եմ թ՛ող.

ՄԱՐԳԱՐ.—Յես քեզ տսում եմ, վոր չեմ թողնի.

ՍԻՄՈՆ.—Թող, ինչ ես խեղդում, տո քուի արջ.

ՏԵՍԻԼ 3

ՆՈՒՅՆՔ ՍԻՄՈՆ ՅԵՎ ՄԱՐԳԱՐ

ՄԱՐԳԱՐ.—Յես չթողի աղա.

ԳԵՎՈՐԳ.—Չոռ աղա, զահրուժար աղա, դու ինձ սրտահաքարիբ, հայվան: Յեթե մյուս անգամ դու իմ ասած խոսքը սխալ ես հասկացել, ել քեզ մի բոպե չեմ պահի: Տո հիմար, դու չգիտես, վոր Սիմոնը իմ հավատարիմ բանվորներիցն է: Յես քեզ չեմ ասել, վոր նրան ամեն ժամանակ կարելի յե թողնել: Դե, կորի աչքիցս հեռացիր:

ՄԱՐԳԱՐ.—Թողնում ել եմ խաթա ա, չեմ ել թողնում խաթա ա: (Գուլես ե գնում)

ՍԻՄՈՆ.—Շորերս թամաշա արեք, կասես շան ըռելս ըլի՞մ ընկած: Ել մի սաղ տեղ չի մնացել:

ԳԵՎՈՐԳ.—Լավ, լավ, դու ել քո շորերի հոգան ես քաշում: Առ ես փողը վերցրու կը գնտս նորը կառնես: (Փող ե տալիս)

Դե հիմա ասա տեսնեմ ի՞նչ լուր ունես, բանվորները գալու մասին ի՞նչ են մտածում:

ՍԻՄՈՆ.—Ես որ եզուցա, խազեյին, ելած-չեկածները ծախել գրավ են դրել: Գիւտլնա, վոր նրանց նիսյա բանըման ա տալիս, նրանով քիչ ու միչ յուր են գնում, նա վոր չլիներ, նրանք մի որ չեյին դիմանա, գաբաստովկան հմի վաղուց քանդված վերջացած կլիներ:

ԳԵՎՈՐԳ.—Ահա թե վորտեղա թազված շան գլուխը յես այդ անտխտան Գիգուլուն ցույց կտամ, թե ի՞նչ է նշանակում գործադուլավոր բանվորներին ապառիկ մթերք բաց թողնել: Լսիր Ստեփան. դու այսոր անմիջապես, կգնաս այդ անուշին կը հասկացնես թող նա զգուշանա. հակառակ դեպքում, յես այդ մասին կհայտնեմ ուր հարկն է: Իսկ դու Սիմոն, ասում ես վոր բանվորները մտադիր են գործադուլը դեռ յերկար շարունակել:

ՍԻՄՈՆ.—Ի՞նչեք ասում խազեյին. նրանցնումն ել ի՞նչ.

հարաքյաթ ա մնացել. նրանց իլլաջ շունեն, նրանք մտածում են, վոր ես որ եզուց գան ձեզնից խնդրվեն.

ԳԵՎՈՐԳ.—Վոր գործը սկսեմ, գան աշխատեն. լսում ես Ստեփան.

ՍՏԵՓ.—Յես այդպես ել կարծում եյի.

ԳԵՎՈՐԳ.—Ուրիշ կերպ ել լինել չեր կարող: Սիմոն դու քու խոսքդ շարունակիր, ասա, նրանց մասին ել ի՞նչ գիտես:

(Յիրանուցք ուզում ե ներս գա, հանկարծ հես ե քաշում)

ՍԻՄՈՆ.—Հա մեկ ել են պետք ե ասեմ, վոր ես որ սահաթի հինգին Գրիգորանց աանը ժողովա նշանակված. ընենց վոր գալու չգալու մասին խորհրդակցություն պտի ըլի. ես ժողովին կարծեմ բժիշկներա գնալու:

ԳԵՎՈՐԳ.—Այդ լավ յեղավ. դու չ ազվեսը յերկու վոտքով ե թակարդ ընկնելու: Յես նրան հիմա ցույց կտամ, թե բանվորներն տիրոջ դեմ գողտելը ի՞նչ ե նշանակվում: Ստեփան, ել սպասելում ժամանակը չի, շտապիր վոստիականապետի մոտ... Սիրանուշ, ի՞նչու համար յես այդտեղ կանգնել. ի՞նչես ուզում:

Տ Ե Ս Ի Լ 4

Նույնի եվ Յիրանուց

ՍԻՄՈՆ.—Գիրքս եյի ուզում վերցնել՝ գուցե յես ձեզ խանգարում եմ.

ԳԵՎՈՐԳ.—Խանգարելու վոչինչ չկա. մենք բոլորովին ուրիշ գործի մասին յենք խոսում: գնանք Ստեփան, ինչպես վոր Սիմոնը ասումե հարկավոր ե վոստիականապետից թույլատրություն վերցնել ե այդ գործը շտապ կերպով սկսել...

(Գեվորգը, Ստեփանը յեվ Սիմոնը գնում են)

Տ Ե Ս Ի Լ 5

Յիրան եվ հես Մարգար

ՍԻՄՈՆ.—Ատելի մարդիկ, ստոր արարածներ, դուք ինձ խաբել չեք կարող. յես ձեր խոսակցությունը լսեցի, այստեղ ինչ վոր դիվային ծրագրերն ե կազմում, բայց դուք իրագոր-

ձեւ նրանց չեք կարող: (նստում ե գրասեղանի առջեւ գիւր ե գր-
բոււմ, գնում ծրարի մեջ) Մարգար. Մարգար.

ՄԱՐԳԱՐ.— Համ ե, ի՞նչեք հրամայում, բարիչնա.

ՍԻՐԱՆ.— Մարգար, դու պիտի գնաս բժշկի մոտ.

ՄԱՐԳԱՐ.— Բարիչնա, ախր նա ուրիշ քաղաքա գնացել. են
որնել աղան զրկեց, գնացի տանը չեր: Բարիչնա, հարցնելը
ամոթ չլինի, հիվանդ հո չես.

ՍԻՐԱՆ.— Այո Մարգար, մի փոքր հիվանդ եմ, և այս նա-
մակով յես նրանից տեղ եմ խնդրում, յեթե կտա կը բերես:
Բայց շուտ պետք և գնաս, վոր նա տանը լինի, ժամը հինգին
նա ուրիշ դեղ պիտի գնա: Լսիր, Մարգար, այդ մասին ձեր
տանը վոչոք չպիտի իմանա:

ՄԱՐԳԱՐ.— Բարիչնա, աղջիկ պարոնն ել չիմանա.

ՍԻՐԱՆ.— Վոչ վոք, հասկանումես, վոչ վոք:

ՄԱՐԳԱՐ.— Աչքիս վրա, բարիչնա. ընենց գնամ գամ վոր
սատանան ել չիմանա: (ծրարը վերցնում գուրս ե վագում: Սի-
րանուր ժամացույցն ե նայում)

ՍԻՐԱՆ.— Արդեն ժամը չորսն ե, ավելի լավ ե ինքս
գնամ: հանկարծ ճանապարհին մի գուցե, ծառան ուշանալ և
ժողովում բոլորը կարող են ձերբակալվել: (գլխաբեր ծածկում
ե յեւ ցտաղ գուրս գնում)

Տ Ե Ս Ի Լ 6

I. II. և III. ԲԱՆՎՈՐՈՒՆԻՆԸ

(Պատաստանված արեւով: Կիսամերկ եւ բարիկ յերեխա-
ների ձեռքից բռնած՝ ցնցսիների մեջ պարուրված ծծկեր
մանուկները գրկած մեհում են բակը յեւ այս ու այն կողմ
նայում)

I. ԲԱՆ.— Տունը անտերա մնացել. եկեք տիրություն ան-
ենք.

II. ԲԱՆ.— Մեզից զոչաղներ ուրիշները կան՝ մեզ փայ չի
հասնի:

III. ԲԱՆ.— Հարուստի տան գաները միշտ կողպածա ըլում,
ևս վճնցա, վոր սրանց դուռը բացա մնացի:

I. ԲԱՆ.— Կողպած դուռը բացանելը, դու կարծում ես դըժ-
վարա: Ես երված սրտի վրա ընենց մի քոցի կտամ, վոր երկաթի
դուռ չի, պողպատի դռներն ել կընկահան կանեմ: Խելքդ ուրա
գնում: Յես են կանանցից չեմ, վոր ձեռքերս ծալած՝ հա-
վի պես տանը նստեմ ու սպասեմ վոր մարդս դնա փող աշխա-
տի ու բերի ես ուտեմ: Յես ես դավողում քու մարդու հետ հա-
վաստաբ տասը տարի աշխատնլ եմ... Են թութունտ դազգյահ-
ների վրա ուրիշ բանվորների բարերար արուն-քրտինք եմ թա-
փել...

II. ԲԱՆ.— Կոներս թիլացալ, վոտքերս կոտրավեց- եկեք
նստենք քիչ գինջանանք, մինչև ես տան խալխը մի տեղից բալ-
քի յերեվան: (Նստում եմ յեվ երեխաներին հավաքում
իրենց շուրջը),

II. ԲԱՆՎՈՐՆԵՐ.— Աղջի, չլինեգրանք դրուստ վոր գնացած
ըլեն: Եդ ասու պատիժ եկածը, հենց մի գլուխ ենա ասում, վոր
դավողը կողպում եմ, տուն ու տեղս հավաքեմ գնամ դազրանիցա:

I. ԲԱՆ.— Զաբաստովկա՞նելուց դեսը, եդ անիծածը բան-
վորների վրա ենքան չարացած, գազազում ա վոր իր ասածը
կանի:

III. ԲԱՆ.— Ախչի, յես ելի չհասկացա, ետ դազրանիցան ինչ
բանա, գեղմ, քաղաքմ, խարարա եկեղեցիմ, ավերակ վանքա,
թե մի ուրիշ ուխտատեղիմ, վոր դրանք տնով տեղիվ թոփ են
ըլել ու ամեն ինչ թողնում են գնան:

I. ԲԱՆ.— Ըհ, հողը գլխիդ, վոր ըտենց աշխարհից բխա-
բար ուխտի անդաճում քնած դատես ախչի, դազրանիցան մեր
սահմաններից դուրս ուրիշ թագավորի ուրիշ ազգի յերկիրա:

III. ԲԱՆ.— Ախչի, բա ինչի՞ ետ յերկիրը մենք սկի չենք
գնում և միանգամեկա չենք տեսնում...

I. ԲԱՆ.— Ըհ, հողը գլխիդ, վոր ըտենց զուգրանիցա գնա-
լու իշտահես ունեցել: Ախչի, վոնչ դու, վոնչ ել քու ոխտը պորտը
ետ դազրանիցան երազումն ել չեն տեսնի: Զազրանիցա գնացողը
սանդուխ-սաբաթներով լիքը Երծաթ ու վոսկի փող և դուժիննե-
րով կարած մողնի շորեր պաի ունենա: Դարդակ ջերով, ըտենց
տկլոր ու չփաղ քեզ կը թողնան, վոր դու մեր սահմանից դենը:

անցնէս: Տասը տեղ առաջդ կկտրեն ու կխաճանփից քեզ հետ
կզրկեն:

III. ԲԱՆ.—Ուրեմն եղ հաշվով, եդ գազրանիցա գնացողները
հաքնվելու և փող խարջելու համար են գնում...

I. ԲԱՆ.—Ընդի գնացողը հազար ու մի նպատակովա գնում:
Որինակի համար, մեր խաղեինը եթե գնումա, մեզ ճնշելու և մեզ-
նից փախչելու համարա գնում՝ մի ուրիշը ուտում առնելու հա-
մար ա գնում. ընենցը կա առուտուր անելու և փող աշխա-
տելու համարա գնում, բազի անտեր ժուղոփիկներն ել կան,
վոր ըստի մեզ մտա իրանց քնթի լայեղ աղջիկ չեն դանում, ըն-
դի կնիկ-ձարելու են գնում:

Մագրադը յեքեփի զոնից մեցում և սեցեակը յեվ այս
ու այն կողմ նայելուց հետո մոտեցում և լուսամուտեցեթից յեվ
զեպի բակը նայում)

Տ Ե Ս Ի Լ 7

ՆՈՒՅՆՔ ՅԵՎ ԲԱՆՎՈՐՈՒՀԻՆԵՐ

ՄԱԳԹԱՂ.—Սիրանսու. Սիրանսու... Ես աղջիկը սերա գնա-
ցել, վոր չի յերկում... Են անիծված Մարգարն ել տանը չի: Մի
ամբողջ ժամ և ձայն եմ տալիս, մեկը լսող չկա: (Գուրս և
գալիս պատշգամբը)

III. ԲԱՆ.—Ախչի, բա ասումեք տանը մարդ չկա, նոր ա-
կողկիցը մի կնիկ գլուխը դուրս հանեց:

II. ԲԱՆ.—Չավողատիրոջ կնիկնա. հրեն դուրս յեկավ բալ-
կոնը, վեր կացեք գնանք նրա հետը խոսենք:

I. ԲԱՆ.—Նրա հետ թողեք յես խոսամ: Նրան յես պիտի
ընենց խոսքեր ասեմ, վոր նրա սիրտը վառվի: Հարուստի
կնկտերանց հետ, ուրիշ ջուռա խոսելա հարկավոր:

ՄԱԳԹ.—Ո՞վ եք դուք:

II. ԲԱՆ.—Մենք ես յերկուսս ձեր գավողում աշխատող
բանվորուհիներ ենք, իսկ ես մեկը ձեզ մոտ աշխատող մի բան-
վորի կնիկա:

ՄԱԳԹ.—Լավ, իսկ դուք չգիտե՞ք, վոր գործարանը չի աշ-
խատում, ի՞նչու համար եք յեկել, ի՞նչ եք ուզում:

I. ԲԱՆ.—Ինչ ենք ուզում... Մենք ուզում ենք, վոր դուք

ամեն ժամանակ ըսենց բողոքաւորութեան մեջ ըլիք, վոր դուք ըսենց փառք ու պատուով միշտ ապրեք, վոր դուք ձեր վերջ ու բոլ սեղանին նստեք՝ սրտներիդ ուղածի չափ ուտեք, խմեք ու վայելեք...

Մենք ուզում ենք, վոր դուք մեզ պես քամբաղդ չլինեք, մեզպես մոռացված ու հալածված չլինեք, մեզպես նեղ ու թշվառ որեր չտեսնեք, ձեր ունեցածով խնդար և ձեր դովաթովը միշտ ուրախանաք...

ՄԱԳ.—Խնչ են նշանակում ձեր եղ խոսքերը, յես չեմ հասկանում:

Լ. ԲԱՆ.—Ի հարկե, դու չես հասկանում, թե ի՞նչի ա թու ժարդը զավորը կողպել ու մեզ ըսենց տկտր ու չփլաղ գցել քու չեքը... Ի հարկե, դու չես հասկանում, թե ի՞նչի յեսք մենք ըսենց վզներս ծռել և ձորտի նման ձեր առաջը կանգնել, դու չես հասկանում թե ի՞նչի ես յերեխեքը չորացած կպել են մեր դռին և ուտել են ուզում, դու չես հասկանում, թե ի՞նչի մեր քանդված ու ավերված տան խոնավ ու մութ պատերի տակ իրար պիտի մենք թափվում ենք ու սոված ծարավ անքուն գիշերներ լուսացնում...

ՄԱԳԹԱՂ.—Բույրիկ, թույլ տվեք ինձ ասելու

Լ. ԲԱՆ.—Ներողութուն, ի՞նչ քույր, մի ասաց, թե յես ձեր քույրն եմ: Դուք վորտեղից ստեղծեցիք եղ միտքը... Ձեր քույրը ձեզպես հագնված, ձեզ պես ճաշն ու նախաճաշիկը արած և ձեզ հետ միասին եղ բալկոնումը կանգնած կլինեք:

ՄԱԳԹԱՂ.—Ուրեմն, դուք ուզում եք ասել, վոր

Լ. ԲԱՆ.—Մենք ուզում ենք ասել, վոր եղ նազվիք վտաներդ շատ կանգնելուց կցավի, կամ գնա ներս, կամ հրաժայի թող քեզ համար մի աթոռ բերեն: Մենք ուզում ենք ասել, վոր առանց շալի եղ քամու առաջ կանգնելը լավ չի. քամին կտա կմբսես ու կհիվանդանաս: Աբրեշումի ու վոսկու մեջ պահված մեծացրած հարուստի կնիկ ես, ցավեր ու նեղութուններ քաշելուն դու սովոր չես, քեզ լավ պահի...

ՄԱԳԹԱՂ.—Վերջապես յես չեմ հասկանում, ի՞նչ նպատակով եք յեկել և այդ յերկար ու բարակ խոսակցութունը ի՞նչի համարե: Դրանով դուք ի՞նչեք ուզում ասել և ի՞նչեք ուզում հասկացնել...

I. ԲԱՆ.—Մենք ուզում ենք ասել, Վոր արեւի տակ կանգնելից լավ չի, եղ սպիտակ յերեսդ ու ձեռքերդ արեւից կսեւեւանան, հրամայի թող մի դոնտիկ բերեն, վերցրու ձեռդ, նստիր եղ բալկոնը, քուչով գնացող-յեկողին թամաշա արա: Ի՞նչ ցավ ունես ի՞նչ դարդ ունես, յերեխիդ փորը կշտացրել ես, արբեշուճի ու մախմուրի շորերը հագցրել, կանֆետ ու շոկոլադը տվել ձեռը, քոժի: հետ դրկել բաղ ու բաղչան ման գալու, կերածները մարսել ու... դարդ անողն ու մտածողը թող մենք ըլենք, Վոր մեր ես սոված-ծարավ, տկոթ ու չփլաղ յերեխանցը ամեն անգամ տեսնալիս, սրտներս ա տանջում, հոգիներս մղկտում...

Տ Ե Ս Ի Լ Ց

ՆՈՒՅՆՔ ՅԵՎ ԳԵՎՈՐԳ.

ԳԵՎՈՐԳ.—(պատգամբեց) Ես ի՞նչ ձեն ու ձունե, ես ի՞նչ դալմադալե: Ի՞նչի համար եք յեկել, ի՞նչեք ուզում:

I. ԲԱՆ.—Իմացել ենք, Վոր գնում ես զագրանիցա, եկել ենք քեզ ձամփու դնեք:

ԳԵՎՈՐԳ.—Ի՞նչ ես կանգնել սրանց հետ գլուխ դնում, դու սրանց թայն ես, դու սրանց ասածը կհասկանամ, դու սրանց ասածին կարողես պատասխան տալ... գնա ներս: (Մագրադիճ տանում է ներս):

II. ԲԱՆ.—Վոչ ու փուչը յեկավ, լայեղ շարեց թե կանգնի մի յերկու խոսք հետներս խոսա: Կնգան վերցրեց հետն ու ներս, գնաց:

III ԲԱՆ.—Նրա համար հալբաթ մեծ անպատվությունա, Վոր յեկավ տեսավ իրա կնիկը մեզ հետ կանգնել խոտումա:

I ԲԱՆ.—Անպատվությունը յես նրան հմի շանց կտամ, յերեխեքը դրեք դրաղ, ամենքդ մի կողմից քար վերցրեք. ընկնենք սրանց գոներն ու շուշեքը ջարդենք, հախ միայն տերը սրանց տունը քանդի ... (յերեխաները վայր եճ գնում յեվ սկզկսում քարկոծել):

ԳԵՎՈՐԳ.—Ի՞նչ եք անում անզգամներ, դռները, լուսամուտները ի՞նչ եք ջարդում:

I ԲԱՆ.—Աչքդ ել ենք հանում, լիսդ ել ենք խառնում. անխիղճ անաստված:

II. ԲԱՆ. — Կտրվի ու ջնջվի ձեր քոքը:

III. ԲԱՆ. — Դուք ել մեր որն ընկնեք, մեզ պես տանջվեք ...

I. ԲԱՆ. — Ախշի ինչեք կանգնել, քար խփեք. (խփում եմ)

ԳԵՎՈՐԳ. — Ի՞նչ եք անում, անզգամներ ... (գլուխը լուսամուտից դուրս է բերում)

I. ԲԱՆ. — Անզգամը քու կնիկնա, վոր յերեսը պուղրա աքսում ու սաղ որը սրա նրա հետ պողրուզ արած՝ բուլվարները չափչում ...

ԳԵՎՈՐԳ. — Ձայնդ կտրի անամոթ, դու հասկաում ես ճւմ հետ ես խոսում: Յես ես բոպելիս հեռախոսով վոստիկանությանը կհայտնեմ և նրանք անմիջապես կգան ձեզ բոլորիդ կը ձերբակալեն և բանտը կտանեն: (գնում է)

III. ԲԱՆ. — Մինք հենց ետ ենք ուզում, մեր մարդկանց ձերբակալելուց և բանտ դրկելուց հետո՝ մեզ ել թող ձերբակալեն, մեզ ել թող բանտ դրկեն: Ջհանդամը, մեզ ենտեղ դոնե մի կըտոր հաց կտան:

I. ԲԱՆ. — Գող ավազակը իրանք ըլեն, բանտը մեզ դրկեն ... նրանք դրկել կողոպտել են մեզ ... նրանք տանջել ու չարչարել են մեզ ... նրանք ծծել քամել են մեր արյունը ... նրանք քանդել հիմնահատակ են արել մեր տունը ... նրանք խայտառակել ու գետնովն են տվել մեր պատիվն ու նամուսը ...

III. ԲԱՆ. — Ախշի, եդ վոչ ու փուչը, եդ ասսու պատժի ու կրակի յեկածը ըղորթ, վոր տելեֆոնով իմաց ավեց, հրեն մեզ համար գարադավոյա գալիս:

Տ Ե Ս Ի Լ Թ

ՆՈՅՆՔ և ՔԱՂԱՔԱՊԱՀ

Քաղաքապաիք հարբած է

ՔԱՂԱՔ. — Ռազայդիտե ...

I. ԲԱՆ. — Հայերեն խոսա, վոր պատասխանդ տամ. ոսերեն վոր խոսում ես, սվա քեզ հասկանում ...

ՔԱՂ. — Դե շատ մի խոսա, փասափուսաներդ հավաքեք քաշվեք ուղ ըլեք, գնացեք ձեր տները, ի՞նչ եք հավաքվել եստեղ

Վնգա բազար շինել: Դուք չգիտե՞ք, վոր հավաքվել և մի տեղ կանգնել խոսալը արգելվում... Բա դուք ես աշխարհում չե՞ք, դուք մեր որենքներին տեղյակ չե՞ք, դուք մեր զակոններին ծանոթ չե՞ք ... դե, հայդան, վո՞ն, մա՞րչ:

Ի. ԲԱՆ.— Հո՞ղա քու գլխին ել ու քու զակոնի գլխին ել ... մի բարի պտուղ ել չեք ... գշեր ցերեկ մեր հետևներիցը պտտվում եք, հոգեհան հրեշտակների նման գալիս եք գլխներիս չոքում ... չեք թողնում թե հանգիստ սրտով մի յերկու բերան կանգնենք, իրար հետ խոսենք: Տանը նստել արգելում եք, քուչեն դուրս գալը արգելում եք. խազեինի հետ գալ խոսալը արգելում եք, զաբաստովկա անելը արգելում եք ... ես ի՞նչ դակոեա, ես ի՞նչ որենքա ...

ՔԱՂ.— Ձայնդ կտրիր, հիմար կին, դու մտածում, հասկանում ես թե ինչ ես խոսում:

Ի. ԲԱՆ.— Յես քեզ նման հարբած չեմ, վոր չհասկանամ, հողա քու գլխին, տարին տասներկու ամիս դուք ըտենց հարբած պիտի ըլեք: Ենքան խմել տրաքվել ես, վոր ել վոտքի վրա կանգնել չեա կարողանում: Գինու տկճորի նման կանգնած տեղդ տմբտմբում ես: Բնթին թամաշ արեք, կասես փթած բաղրջան ըլի, վոր հուպ տաս, ովա իմանամ յերկու վեդրա գինի արաղ թափվի:

ՔԱՂԱՔ.— Ձենդ կտրի, թե չե եդ լեզուդ տակից կհանեմ: Դու կնիկ արձատ շլինելիր, յես գիտեի քեզ հետ ինչպես կխոսեի: Դե գնացեք, դուրս կորեք եստեղից... դե, հայդան, վո՞ն, մա՞րչ...

ԲՈՂՈՐ.— Մենք չենք գնում, մենք եստեղ գործ ունենք:

Ի. ԲԱՆ.— Մենք եստեղ հաշիվներ ունենք: Դուք ի՞նչ իրավունք ունեք մեր հաշիվներին խառնվելու, վոր բանվոր ենք հո՞ ձեր ձեռքին յեսիր չպիտի դառնանք. պալիցեյսկի յեր գնացեք ձեր պալիցեյսկուլթյունը արեք, ի՞նչի համար եք յեկել եստեղ, ի՞նչ գործ ունեք մեզ հետ...

ՔԱՂԱՔ.— Ուրեմն դուք չեք ուզում ձեր կամքովը դուրս գալ: Լա՛վ... (Պվիսոկը տալով գնում)

Տ Ե Ս Ի Լ 10

ՆԱԼԻՆԻ ԵՎ ԳԵՎՈՐԳ

ԳԵՎՈՐԳ.—(Լուսամուկից) դուք դեռ այս տեղեք, ձեր այդ տկտր ու մերկ լակոտներին տարեք աչքիցս հեռացրեք, ի՞նչ եք նրանց հավաքել հետներդ բերել ...

Ի. ԲԱՆ.—Բերել ենք, սրանց տեսնեք, բալքի ամաչեք: Տարին տասներկու ամիս աշխատում ենք ձեր զավոդում, տանջվում չարչարվում ենք՝ ստացած ոռճիկներովս չենք կարողանում թե մի յերկու արշին չիթ առնենք կարենք վրներս գցենք, իսկ ձեր տանը որը տասը տեսակ շոր եք հագնում, սհաթը մի փասոն փոխում... Դուք ձեր վրա ծախսած հաղարները չեք տեսնում. Ձեր կերածը, ձեր քոռ ու փուչ արածը ձեր աչքին չի յերևում, խնայում եք բանվորների պահանջները տաք, վոր գործադուլը վերջանա, գանք աշխատենք...

ԳԵՎՈՐԳ.—Հետո.

Ի. ԲԱՆ.—Հետո են, վոր զարաստովկի պատճառով դուք ահագին փասոններ եք կրում, ձեր աչքին դա չի յերևում, իսկ դուք հայտարարություն եք կազմում «վոր զավոդը կողպում եմ, գնամ զագրանիցա» գնում յես զագրանիցա ի՞նչ անես, հետեվիցդ կարմիր ծաղիկ յեն զրկել, թե ենտեղ հենց մի քանսը քեզ յին կարոտել: Բեզ եյին սպասում...

ԳԵՎՈՐԳ.—Հետո հետո...

Ի. ԲԱՆ.—Հետո, են վոր մենք ետտեղ ամբողջ կյանքներս փթացնում ենք, յերկու վերստի վրա տասը տարին մի անգամ մեր ծանոթների մեր բարեկամների տեսության չենք կարողանում գնալ, իսկ դուք շարաթը մի անգամ զագրանիցա եք վադում... Կարծես դուք վերի արտի կարմիր ծաղիկները լինեք.

ԳԵՎՈՐԳ.—Վերջացրիր ճառդ.

Ի. ԲԱՆ.—Վերջացրի.

ԳԵՎՈՐԳ.—Գե. ուրեմն հիմա կարող եք ձեզ ազատ համարել: Յեզ քանի դեռ վոստիկանությունը չի յեկել, դուք ձեր յերեխաներին հավաքեք գնացեք: Ձուր տեղը կյանքներիդ վերտանգի միք յենթարկիլ: Յեթե դուք ձեզ համար չեք մտածում,

ձեր այդ փոքրիկ յերեխաների համար պարտավոր եք մտածելու իսկ ինչ վերաբերվում է ձեր ամուսինների բանտարկությանը՝ յես ձեզ^ն պետք է ասեմ, Վոր կառավարությունը առանց իմ և ձեր կամքը հարցնելու հետապնդում է հեղափոխականներին և այն բոլորին, ովքեր կառավարության որենքների դեմ են պնդում: Ձեր ամուսինները մի գործարանում աշխատելով միևնույն ժամանակ իրենց հեղափոխական աշխատանքն են տարել և դրա համար էլ նրանք պետք է պատժվեն:

(Գնում է)

Տ Ե Ս Ի Լ 11

ՆՈՒՅՆՔ, ՔԱՂԱՔԱՊԱՀ ՅԵՎ ՊԱՀԱՊԱՆ

(Գռնապաեք սպիտակ գոգնոցը կապած յեվ կարճ փայ-
սք ձեռքին)

ՔԱՂԱՔ.— Հրես սրանք են: Յեկեկ հավաքվել են ես տեղ շնուդի բազար շինել: դե հիմի ասեք տեսեմ, գնալու միտք ունե՞ք թե չե:

ԴՌՆԱ.— Կանգնել ես սրանց հետ մասլահաթ անձւմ, յես սրանց ընենց դուրս անեմ, Վոր քեփդ դա: (Քաղաքապաեի ակահօջին) Սրանց են փափուկ տեղիցը քիչ Վոր կմշտես՝ զոռով էլ Վոր նրանց ես հայաթումը պահես, էլ նրանք չեն մեա:

1. ԲԱՆ.— Ի՞նչ ասացիր. հտ թւմը կըմշտես. այ հողեմ գլուխդ. դու հտ թւմ տեղն յես մեզ դնում. դուք կարծում եք մենք ձեր մատուշկաներից ենք... Այ ձեզ կմշտել. այ ձեզ կմշտել. (Ապսակում է ցրանց. յեվ ցրանք յերկուսով փախչում են իսկ կահալ ցրանց հեապնդում են)

Տ Ե Ս Ի Լ 12

ԳԵՎՈՐԳ ՅԵՎ ՄԱԴԹԱՂ

(Սենյակում)

ԳԵՎՈՐԳ.— Ահա թե ինչ, ուրեմն իմ տանը, իմ սեփական հարկի տակ հեղափոխական ոջախ և ստեղծվել, Վորի մասին յես զաղափար անդամ չունիմ: Գիտեմ պիտեմ Վորտեղ և թաղված

այգ ոճի գլուխը: Մարգար: Շուտով ամեն ինչ կպարզվի: Մարգար:

ՄԱՐԳԱՐ.— Համե ադա.

ԳԵՎՈՐԳ.— Գնա բժշկին կանչիր, ասա աղան քեզ հետ ուզումե խոսի, թող ես բոպեյս գա ինձ մոտ: (Մարգարք շքայ-
շքայ գնում է մինչեւ գուռք յեւ խկույն հետ գառնում)

ՄԱՐԳԱՐ.— Ադա, նա վոր տանը չինի՝ ուրիշ վոր դոխտուրը բերեմ:

ԳԵՎՈՐԳ.— Գնա կորի, այստեղ հիվանդ վոչ վոք չկա.

(Մարգարք գնում է)

ՄԱԳԹԱՂ.— Ի՞նչու համար ես նրան կանչում. ի՞նչ յես ուզում դու նրանից:

ԳԵՎՈՐԳ.— Դու այդ հետո կիմանաս, յես ինչպես տեսնում եմ՝ նա ձեզ ել է վարակել, ձեր միջոցով նա այստեղ սերտ կապեր է հաստատել և գաղտնի աշխատանքներ է տանում... (մտածում է) դեղեցիկ և հարուստ ոճիտով աղջիկ... յերջանիկ ու բախտավոր կյանք... փայլուն ապագա... գործարանային բանվորութուն... կուսակցական աշխատանք... գործադուլ... ապստամբութուն... հեղափոխութուն... Ձե, լավ է մտածված, լավ է ծրագրված... Հա՛, հա՛, հա՛... լավ միտք է, լավ ախորժակ է...

ՄԱԳԹԱՂ.— Ձուր ես դու այդպես կարծում, նա այդ տեսակ մտադրութուն չունի, քո հարստության, քո աղջկա ոճախ համար նա չի ել մտածում: Այդ մասին դու կարող ես բուրոզվին հանգիստ լինել, իսկ ինչ վերաբերվում է նրան՝ թե կարող ե պատահի վոր նրանք սիրահարված լինեն, դա ել մի մեծ մեղք չէ: Յես կարծում եմ, վոր դու ավելի գոհ պիտի լինես, յեթե Սիրանուշը այդ տեսակ խելոք ընտրութուն է արել... ճիշտ է, նա փող, հարստութուն չունի, բայց ուսում, գիտութուն հո ունի, ուրիշ ել ի՞նչ կու ուզում... հետևապես դու չպիտի բարկանաս, և բարկությանդ թյունը խեղձ մարդու գլխին թափես...

ԳԵՎՈՐԳ.— Դրանով դու ի՞նչ կու ուզում ասել, վոր յես նրա կորստյան պատճառ եմ ուզում դառնալ... վոր ես միջոցներ եմ

մտածում նրա կյանքի դեմ...

ՄԱԳԹԱՂ.—Յես այդ չասացի...

ԳԵՎՈՐԳ.—Դու շատ բան ասացիր. քո խոսքերի մեջ այդ միտքը անկասկած կար... Դե, խոսիր, պարզիր ասածներդ:

ՄԱԳԹԱՂ.—Անհասկանալի յես վոչինչ չասացի... աստված իմ, աչքերդ արյունով են լցված, քո այդ այլալված դեմքից յես սարսամիում եմ... (հեռաճալու փորձ ե անում)

ԳԵՎՈՐԳ.—Ո՞ւր, սպասիր... (քեզից բռնում ե հեռ փաշում)

ՄԱԳԹԱՂ.—Ի՞նչես ուզու, թող, հեռացիր ինձանից...

(մտնում Սիրահուլեր յեվ ապամեմ հայում)

Տ Ե Ս Ի Լ 13

ՆՈՒՅՆՔ ՅԵՎ ՍԻՐԱՆՈՒՇ

ՍԻՐԱՆ.—Դարձյալ կռիվ:

ԳԵՎՈՐԳ.—Լռիր անսպասկան, դու յես այս բոլորի պատճառը:

ՍԻՐԱՆ.—Ավելի շուտ դուք... որ չի լինում, վոր դուք իրար հետ չկռվեք: Մանկությունից ձեր քողցը խոսքը լսելու կարոտ մնացի. Ամեն որ կռիվ, ամեն որ սրտնեղություն... և սա տուն ե, սա կյանք ե... յերանի յերբ ե լինելու այս բոլորի վերջը...

ԳԵՎՈՐԳ.—Չայնդ կտրիր, ապա թե վոչ յես քեզ կխեղդեմ...

Հարձակվում ե Սիրահուլերի վրա, Մագթաղը արգելում ե: Վահանք մտնում ե յեվ զարմացած հայում:

ՄԱԳԹԱՂ.—Ո՞ւմը խեղդես, քո հարազատ, քո միակ զավակին:

ԳԵՎՈՐԳ.—Յես հարազատ չունիմ, դուք բոլորդ ինձ ատելի եք, կին, զավակ, բանվոր, ծանոթ. բարեկամ. բոլորը, բոլորը ինձ թշնամի են: (Հանկարծ հեռանում ե Վահանքից)

Ա՞, դու այստեղ ես... այս շփոթները դու յես լցրել սրանց գլուխը... ապերախտ, գործարանս քանդեցիր, խելոք ու հնազանդ բանվորությունը գժվացրիր, խելքահան արիր, հիմա ել ընտանեկան խաղաղ կյանքս ես ուզում թունավորել, սրանց ևս լարել իմ դեմ... դ՞ուրս, դ՞ուր կորիր իմ տնից, չհամարձակվես մյուս անգամ վոտք դնել իմ շեմքը... քեզ նմանների հետ յես այլևս գործ չեմ ուզում ունենալ:

ՎԱՀԱՆ.— Գեվորգ Բաղդանիչ:

ԳԵՎՈՐԳ.— Վոչ մի խոսք:

ՎԱՀԱՆ.— Գեվորգ Բաղդանիչ, թույլ տվեք բացատրելու:

ԳԵՎՈՐԳ.— Ինձ հարկավոր չեն քո բացատրությունները, դուրս կորիր իմ տնից, խառնակիչ...

ՎԱՀԱՆ.— Գեվորգ Բաղդանիչ, լավ դիտեցեք զիմացներդ:

ԳԵՎՈՐԳ.— Տեսնում եմ, պարոն, ուրիշի փշրանքներով մեծացած աղքատներից մեկը և վոչ ավելին...

ՎԱՀԱՆ.— Յեթե զուք ձեր կարողությունից շլացած, աղքատներին մարդ չեք ուզում ճանաչել... սակայն իմացած յեղեք, վոր լավ ե լինել աղքատ՝ բայց արդարադատ, քան հարուստ և անիրավության կողմնակից:

ԳԵՎՈՐԳ.— Դու դեռ համարձակվում եմ իմ դեմ խոսել, հակաճտուել...

ՎԱՀԱՆ.— Գուցե կհրամայե՞ք սողադ, գալարվել ձեր վտաքերի տակ,

ԳԵՎՈՐԳ.— Ապերախտ, քո կողմից այդ ներողություն խնդրելու փոխարեն ե... Ի՞նչ իրավունքով դու համարձակվեցիր բանավորին վկայական տալ և հաստատել նրան իմ գործարանում հիվանդացած լինելը: Յեվ քո տված այդ կեղտոտ թըղթի կտորի պատճառով՝ յես ստիպված պիտի լինիմ հարյուր ուրբի փող տալու մի քոստտին, վորի վրա թքելն անգամ ասոսոսում եմ:

ՎԱՀԱՆ.— Բայց դուք մոռանում եք, վոր այդ քոստտ բանավորը ամբողջ տասնուհինգ տարի իր ուժն ու յեռանդը ձեր ոգտին ե սպառել... և դուք այս որ նրա քայքայված առողջությունը վերականգնելու համար այդ չնչին գումարը նույն իսկ խնայում եք... նրանց քրտինքի դառը կաթիլներն ե, վոր ձեզ միջոց են տալիս այս հոյակապ պալատներում ապրելու, մինչդեռ գործարանի այն կեղտ ու մրի մեջ փթող, տգիտության խաւարի մեջ խարխավող այն թշվառ արարածները ընկած մութ ու խոնավ ներքնահարկերում՝ ցամաք հացի կարոտ որ են անցնում...

ԳԵՎՈՐԳ.— Դե բավական ե... յերախտամոտ... միթե յես

քեզ դրա համար ուսման տվի, գիտութեան տեր դարձրի, վոր այսոր գաս և գլխիս դատավորի պաշտոն կատարես:

ՍԻՐԱՆ.—Սուտ եք ասում, նա ձեզանից բարերարված չե՞ մարդասիրական զգացմունքը չե, վոր ձեզ թելադրել ե ոգնութեան ձեռք մեկնել նրան, վորի կյանքի դեմ դուք այսոր ծըրազրներ կյիք մշակում...

ԳԵՎՈՐԳ.—Ձայնդ կտրիր անպատկան. քեզ գլխիս վերահսկիչ են նշանակել ի՞նչ ե, վոր ամեն ժամանակ և ամեն մի քայլափոխում հետևում ես ինձ:

ՍԻՐԱՆ.—Հանցավորներին, այո, պետք ե հետևել...

ԳԵՎՈՐԳ.—Անզգամ... (Ետե՛նա կվում ե վրան)

ՄԱԳԹԱՂ.—Հանգստացիր այ մարդ, ինչ յեղավ քեզ...

ԳԵՎՈՐԳ.—Թո՛ղ, թո՛ղ նրա մազերից բռնեմ և դուրս շարտեմ:

ՄԱԳԹԱՂ.—Ուշքի արի և մտածիր թե ի՞նչ ես խոսում... միթե կարելի չե, վոր մարդ իր վորդուն այդ կերպ վերաբերվի...

ԳԵՎՈՐԳ.—Սուտ ես ասում. նա իմ վորդին չե...

ՍԻՐԱՆ.—Մեծ բազդավորութուն կլինեիր յեթե մի լսեղճ ու աղքատ ընտանիքի դավակ լինի...

ԳԵՎՈՐԳ.—Լռեցրու նրան...

ՄԱԳԹԱՂ.—Լավ, նա լռում ե: Գնանք մի փոքր հանգստացիր, այնուհետև ամեն ինչ կուղղվի... (Գեվորգ լեվ Մադթազ գնում ե)

Տ Ե Ս Ի Լ 14

ՍԻՐԱՆՈՒՇ ՅԵՎ ՎԱՀԱՆ

ՎԱՀԱՆ.—Սիրտնուշ, այդ ի՞նչ լսեցի, այդ ի՞նչ ասացիր:

ՍԻՐԱՆ.—Կպատմեմ, յես պարտավոր եմ քեզ բոլորը պատմելու: Բայց նախ քան այդ այստեղից պետք ե հեռանանք, յես այստեղ մի բոպե այլևս չեմ ուզում մնալ: Վահան, սիրելիս, իմ ամբողջ կյանքով քեզ եմ պարտական, դու փշրեցիր իմ կաշկանդված մտքիս կապանքները և այսոր դարձյալ դու յես, վոր իմ ազատարարի դերը պիտի ստանձնես... կյանքիցս դատ

ուրիշ բան չունեմ և ահա նա քեզ եմ տալիս, տար հեռացրու ազատիւր ինձ այստեղից:

ՎԱՀԱՆ.— Ուրեմն, դու վճռել ես անպատճառ հեռանալ:

ՍԻՐԱՆ.— Հեռանալ և որքան կարելի յե շուտ, քեզ հետ մի ամենա ազքատ խրճիթում, մի կտոր ցամաք հացով ես ավելի ուրախ, ավելի յերջանիկ կլինեմ, քան այս զարդարուն, շքեղ դահլիճում... Ի՞նչ եմ անուժ, այս շքեղութիւնը, այս պերճանքը, բազմատեսակ խորտիկներով լի այն ճոխ սեղանը, յերբ նա ուրիշի քրտինքով, ուրիշի բերանից խլված պատառներով և ճոխացրած...

ՎԱՀԱՆ.— Հանգստացիր սիրելիս, դու շատ ես հուզված դու շատ ես վրդովված: Սյդ առթիւ մենք կմտածենք և քեզ հետ միասին կխորհենք... Բայց ահա նրանք գալիս են, յես կհեռանամ, համբերիր մի փոքր ևս և դու ընդմիջտ ազատ կլինես այս տնից, այս խեղդող մթնոլորտից, ուր վիշտն ու տանջանքն և քեզ բաժին ընկել... Յտեսութիւն... (զնուժ է)

Տ Ե Ս Ի Լ 15

ՄԱՐԳԱՐ ՅԵՎ ՀԵՐԻՔՆԱԶ

ՅԵՐԿՈՒՍՈՎ ԺԱՂԿԱՄԱՆՆԵՐ ԸՆԴ ԵՆ ԲԵՐՈՒՄ

ՄԱՐԳԱՐ.— Ըհ, յանտեր մնաս ... տունը մտնես ծաղիկներա, բաղչեն ծաղիկներա, կանտորը ծաղիկներա, կուխնում ծաղիկիերա, հայաթում ծաղիկներա ... Ես ծաղիկների փողով յարար քանի սոված կը կշտանա ... մեր զարաստովկա արած քանոլորի կնանիքը քիչ առաջ, վոր յեկել հայաթում կուլում էյին նրանց սոված յերեխեքնել, վոր ընենց մրմնջալով լաց են ըլում ու մորներիցը հաց ուզում, Հերիքնազ ջան, ենա լացս գալիս եր, մոտս թե փող ունեցել էյի, աստոժ զիտենա, դիփ կտայի նըրանց ...

ՀԵՐԻՔՆԱԶ.— Աղան ել տվեց վճնց չե ... զարադավոյ կանչեց ու հայաթիցը դիփունանց դուրս արեց ...

ՄԱՐԳԱՐ.— Կոտորվեք քաաթիբններ, կոտորվեք ...

Յեանի ես չի ձեր ձրը ... Ախ վոչինչ չեմ ուզում, յերկու սհաթ Աստված դառնամ:

ՀԵՐԻՔՆԱԶ.— Ըհ, հողս գլխիդ միթո՞ւմ դու ել բան ասիր վոր Աստված դառնաս ի՞նչպիսի անես:

ՄԱՐԳԱՐ.— Այթե ինչ, ամենից առաջ ես աշխարհը շուռ կտամ, շուռ տալը դու ուրիշ բան չհասկանաս: Ընենց վոր յերկինքը գա մեր վոտների տակը, իսկ գետինը գնա նրա տեղը: Հետո մարկաց խասիյաթները կփոխեմ ու կհրամայեմ, վոր որ իորդները տիկիներնս դառնան, տիկիները որ իորդ, հարսը՝ սկեսուր դառնա, սկեսուրը՝ հարս, տղամարդը՝ կնիկ դառնա, կնիկը՝ տղամարդ, հարուստները քեասիրանան, քեասիրները՝ հարուստանան, մեռելները՝ սողանան, սողերը՝ մեռնեն ... արա դու են վախտը թամաշա արա, թե մեջները ինչ դալարլաղ կնկնի հա՛, հա՛, հա՛:

ՀԵՐԻՔՆԱԶ.— Հա՛, հա՛, հա՛ ... (ճախ ծիծաղում է յե՛վ հետալաց լիճում)

(Գլուխը ծեկան գրած լաց է լիճում)

ՄԱՐԳԱՐ.— Խեղճ Հերիքնաղ, յերկու շաբաթա գլխացալից մեռնում ես, քեզ մտիկ տվող չկա, համա յերեզի առալոտ են սատկած մոփսիկը քիչ կնձկնձուձ եր, են սհաթը վերցրին ֆայտոնով գոխտուրի կուշտը տարան: (Հերիքնաղի գլխին յերկու ձեռքով խփում է) Մեռնես գլուխ, մեռնես, վոր սրանց կշտին մի շան չափ ել պատիվ չունես ...

ՀԵՐԻՔՆԱԶ.— Իու ի՞նչես գլխիս խփում ... (գլուխը բռնած գուրս է գնում)

ՄԱՐԳԱՐ.— Եանի ես չի քեասիրի որը: Հերիքնաղ ջան, նեղացար. վայ յես քու հողին ուտեմ, յես քեզ նրա համար չխիեցի, վոր դու նեղանաս. յես քու գլխին դուրբան, քու ջանիդ դուրբան, արի բարըշենք, արի բարըշենք ...

(Վազելով նրա հետեվից գուրս է գնում)

Տ Ե Ս Ի Լ 16

ԳԵՎՈՐԳ ՅԵՎ ՍՏԵՓԱՆ

(Քակում գրոսնում են)

ՍՏԵՓԱՆ.— Գեվորգ Բաղդանիչ, հաղթությունը մեր կողմես մի քանի բանվորներ ես ձերբակալեցին:

ԳԵՎՈՐԳ.— Ի՞նչպես, յերևի ելի նոր ժողով եյին գումարել:

ՍՏԵՓԱՆ.— Այո, լուր բերին, վոր մեր բանվորներից մեկի տանը ժողով և նշանակված, յես անմիջապես հայտնում եմ վոստիկանապետին և նշանակված ժամին ժողովատեղին շրջապատվում ե և նրա կարգադրությամբ բոլորը ձերբակալվում բանտն են քշվում: Բայց նրանցից մեկը ինչպես և պատահում, ճանապարհին փախչում ե ...

ԳԵՎՈՐԳ.— Այդ մեկը լավ չե, Ստեփան, նա կարող ե մեղ փաստել: Հարկավոր ե միջոցներ ձեռք առնել, նրան ել մյուսների մոտ ուղարկել և թող նրանք այնտեղ միմիանց քարոզեն, «Յեղբայրություն», «Միություն», «Ազատություն», «Սոցիալիզմ», նրանց հոխորտանքից ես այլևս չեմ վախենում:

Յես կարծում եմ, վոր գործադուլի հարցը արդեն լուծված ե հա՛, հա՛, հա՛ ... գործադուլ, գործադուլ ... ահա ձեզ գործադուլ ...

ՍՏԵՓԱՆ.— Այն անպիտան Գիգուլի հետ ել խոսեցի, նա խոստացավ բանվորներին ապառիկ վոչինչ չտալ: Գեվորգ Բաղդանիչ, գործը այսպես հաջող ընթացք ընդունելուց հետո, կարելի չե վստահ ասել, վոր մենք հաղթությունը տարել ենք: Յես համոզված եմ, վոր վաղը մյուս որը բանվորները իրենք կը գան և կխնդրվեն:

ԳԵՎՈՐԳ.— Վոր գործը սկսեմ և գան աշխատեն, վոչ սիրելիս դեռ վաղ ե գործադուլը դեռ յիրկար պետք ե շարունակվի: Փողոցներում նրանք քիչ ել թող թափառեն, քիչ ել սոված ծարավ զկուտան մինչև վոր խելքի գան: Ինչպես հարկնա յես նըրանց մինչև չճգմեմ, չնկճեմ, նրանք չեն խրատվի... Իսկ այնուհետև թող գան ընկնեն վոտներս խնդրեն, ազաչեն և ետ դեպքում միայն գործը կսկսեմ, բայց թե թնչ պայմանով այդ արդեն իմ գործս ե...

ՏԵՍԻԼ 17

ՆՈՒՅՆՔ ԵՎ ԳՐԻԳՈՐ

ԳՐԻԳՈՐ.— Պատիվ ունեմ ներկայանալու, տեր և հավատարիմ ծառա...

ԳԵՎՈՐԳ.—Ո՞վ յես. ի՞նչ յես ուզում.

ԳՐԻԳՈՐ.—Ձեր բանվորութեան կողմից ուղարկված ներկայացուցիչ եմ... Ընկերներս պահանջում են վոր միջամտեք ուր հարկն ե ազատել տաք մեր բանտարկված ընկերներին...

ԳԵՎՈՐԳ.—Պարոն ներկայացուցիչ, դուք եք, վոր իմ հրամաններիս պիտի յենթարկվեք, այլ վոչ թե յես ձեր հրամաններին: Լսիր, քո ընկերներին ազատում չկա: Յես դեռ ավելին խիստ միջոցների պիտի դիմեմ: Մինչև դուք բոլորդ քանաչ ուղարկվեք դուք չեք խրատվի, լեզուներդ չեք կարճացնի:

ԳՐԻԳՈՐ.—Բանտերով եք ուզում մեզ ընկճել, մեր մէտքը, մեր լեզուն կաշկանդել, վողորմելիներ, դուն եք, վոր բանտի անունը լսելիս դողում սարսափում եք, իսկ մենք նրանից սարսափելու վոչինչ չունենք...

ԳԵՎՈՐԳ.—Յերբ ձեզ այնտեղ կտանջեն, կաշիներդ կքերթեն, դուք կսարսափեք:

ԳՐԻԳՈՐ.—Մեր կաշին ձեզպես բարի մարդիկ վաղուց են քերթել.

ԳԵՎՈՐԳ.—Ձայնտ կտրիր. դու հասկանում յես ինչե նշանակում տիրոջ դեմ հակառակվելը: Իու չգիտես, վոր բավական ե իմ մի ակնարը, և դուք մտրակի տարափների տակ աքսոր կը քշվեք...

ԳՐԻԳՈՐ.—Իսկ դուք չգիտեք, վոր բավական ե մեր այս ջլուտ բազուկների մի հաքվածը, և տունը կը փլվի ձեր գլխին...

ԳԵՎՈՐԳ.—Ստեփան, գնա հայանիր վոստիկանութեանը՝ (սեփանք ուզում եզգալ)

ԳՐԻԳՈՐ.—.—Ձհամարձակվես տեղից շարժվել...

ԳԵՎՈՐԳ.—Ուրեմն դու չես ուզում քո կամքով հեռանալ, կորչել այստեղից...

ԳՐԻԳՈՐ.—Իսկ դուք, չեք ուզում հարգել մեր առաջարկը և լսել մեր ձայնը...

ԳԵՎՈՐԳ.—Ավնլի շուտ յես ձեր ձայնը կկտրեմ, քան կը հարգեմ...

ԳՐԻԳՈՐ.—Տեսնենք ո՞վ ո՞ւմ ձենն ե կտրում...

(Գառույճք բռնում ե ձեռքն յեզ հարձակվում ցախ

Գեվորգի յեվ ապա սեփաճի վրա)

Գեվորգ.—Ստեփան, վոստիկան կանչեր.

Գրիգոր.—Մեր որը մթնեց Վճճ...

(Յերկուսին ել սքանում ե յեվ դուրս վազում)

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Ր

III ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Բեմը ներկայացնում ե հերքնահարկ պանդոկ: Կամարա-
ձե առաստաղ: Չորս անկյուններում դրված են հասարակ սեղան-
ներ և աթոռներ: Ամենախուլ և մութ անկյունում Գարեգինը, Ար-
շակը և Արրահամը նստած սեղանի շուրջը, մի շիշ գինի առաջ-
ները դրած՝ խորհրդավոր, մաքերի փոխանակութիւն յեն
անում:

Տ Ե Ս Ի Լ 1

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՇԱԿ ՅԵՎ ԱՐՐԱՀԱՄ

ԱՐՐԱՀԱՄ.—Նրանք շատ նեղ ու չքավոր գրութիւն մեջ
յեն, .. Նրանք որվա ուտելու հաց չունեն: Ելած-չելածները տա-
րել գրավ յեն դրել. ես պայմաններում գործադուլը շարունակել
անկարելի յե. . . Ինձ թվում ե սկզբից մենք այդ գործադուլը չը-
պետք ե անելինք...

ԱՐՇԱԿ.—Քու կարծիքին յես համաձայն չեմ: Յեթե մենք եսոր
գործադուլը շարունակելու հնարավորութիւնը չունենք ես
դեռ չի նշանակում, վոր մենք գործադուլ չպետք ե անելինք...

ԱՐՐԱՀ.—Իմ ասածը դուք չհասկացաք: Յես ասում եմ, վոր
բանավորութիւնը նեղ ու թշվառ վիճակի մեջ ե: Վոր նրանք սո-
ցիալիստական դադափարներով տարված ե հեղափոխական հո-
գու տեր մարդիկ չեն: Քաղցն ու կարիքը ստիպում ե նրանց բո-
րովին հակառակը մտածել...

ԳԱՐԵԳԻՆ.—Քաղցն ու կարիքը մեզ համար անծանոթ յե-
րևույթ չի, եզ տեսակ նեղ ու թշվառ որեր մենք շատ ենք տե-
սել: Յեվ եզ նեղ ու թշվառ որերն ե, վոր մեզ հարկազրում ե
դործադուլի դիմելու...

ԱՅՐԸ.—Վոր բանվորութիւնը գործադուլը շարունակելու հնարավորութիւն չունի, դուք դրա դեմ չեք հակառակում, ուրեմն ինձ մնում է միայն մի հարց տալ: Վերջապէս գործադուլի դեմ արտահայտվող բանվորների տրտուկն ու դժգոհութիւնը դուք հաշվի պիտի առնեք թե չե՞... (Սիմոնը մտնում է յեվ գգուշուքամբ ուզում է մտեցնալ յեվ նրանց խռակցուքուքը լսել, բայց նրանք իսկույն նկատում են: Սիմոնը իրեն գիտամբ հարբած է ձեզացնում:)

Տ Ե Ս Ի Լ 2

Նուրի յեվ Սիմոն

ԱՐՇԱԿ.—Զգուշացեք, մեզ լսող կա... Սիմոն ինչի համար ես եղտեղ կանգնել, (Սիմոն լուռ է) գուցե գինի խմել ես ուզում, արի ես մի բաժակը վերցրու խմիր եղ փակ լեզուդ իսկույն կբացվի: Ասում են, վոր գինին գորավոր հասկութիւն ունի, քոսին աչքա տալիս, չորախին ել վոտք, աղքատին՝ հարըստութիւն, մունջին...

ՍԻՄՈՆ.—Յես վոչ քոսեմ, վո՞նչ ել չորախ...

ԱՏՇԱԿ.—Նշանակում է, դու են վերջին տեսակիցնեա, վոր յեթե մի բաժակ գինի խմես, են բոպեյին բլբուլ կգտանաս:

ՍԻՄՈՆ.—Բլբուլ կգտանամ, թե ազուով, եղ ձեր գործը չի... Գուք իմ հարցին պատասխանեք...

ԱՅՐԸ.—Հմրց...

ԳԱՐԵԳԻՆ.—Ի՞նչ հարց...

ԱՐՇԱԿ.—Յես քեզ լսում եմ,

ՍԻՄՈՆ.—Գործադուլը յերբ կվերջանա՞

ԱՐՇԱԿ.—Եղ հարցի պատասխանը ինչ՞նչ անպատճառ մեզնից ես պահանջում... գնա գիմիր Գեվորգ Բաղդանիչին, քո տըված հարցի պատասխանը թող նա տա...

ԱՅՐԸ.—Գործարանի տերը չե վոր նա է.

ՍԻՄՈՆ.—Գործարանի տերը ձիշտա նա ա, բայց կարգադրութիւնը մենք ձեզնից ենք սպասում: Կապլիմեսարի նման, դուք ձեր մատը վոր կողմը շարժում եք, մեր բանվորութիւնը են կողմնա թեքվում: Նրանք ձեր հրամանին են սպասում: Գուք

վոր նրանց մի բերան ասեք, նրանք առանց մի խոսք ասելու գլուխները քաշ կզնան ու կաշխատեն: Նրանք ձեզ են մտիկ տալի...

ԱՐՇԱԿ.—Ձեզ ով՞նք եղպես հասկացրել:

ՍԻՄՈՆ.—Ով պտի հասկացնի, մենք չենք հասկանում, մենք խելք չունենք... դու արխային կաց, ենքան ել մենք հիմար չենք վոր չհասկանանք. ձեր մասին մենք ամեն ինչ գիտենք, վոր դուք սոցիալ դեմոկրատներ եք, վոր դուք- սլրապագանդիստներ եք, վոր դուք ետեղ գինի խմելու համար չեք եկել, եղ ել գիտենք.

ԱՐՇԱԿ.—Լավ ես սկսել, շարունակիր...

ՍԻՄՈՆ.—Իհարկե կշարունակեմ, կարծում եք յես ձեզնից կվախենա՞մ, սկի ել չեմ վախենա դուք ինձնից վախեցեք, վոր մի ձեն տամ թե չե տասը գարադավոյ ներս կթափվի նրանք ճրագով են ման գալի, ձեզ:

ԱՐՇԱԿ.—Հետո-հետո...

ՍԻՄՈՆ.—Հետո են, վոր դուք անխիղճ ու անաստված մարդիկ եք, վոր դուք բանվորներին ամենախայտառակ կերպով խաբուժ եք, վոր դուք մեզ համար բոլորովին չեք մտածում. ձեր արած դաբաստովկեն մեր տունը քանդեց, ունքը շինելու տեղ, դուք մեր աչքը հանեցիք... հաց տալու տեղ, դուք մեզ հացից զրկեցիք...

ԱՐՇԱԿ.—Պետք ե ասած, վոր լավ ես ճառում, քայց հետաքրքիր ե իմանալ, եղ խոսքերի համար Գեվորգ Բաղդանչից ի՞նչ քան փող ես ստացել...

ՍԻՄՈՆ.—Գեվորգ Բաղդանչիչը եղ տեսակ բաների համար յեթե փող տալու լինի, դու ել կստանայիր:

ԱՐՇԱԿ.—Դու դուր ես կարծում, վոր ամեն մարդ կհամաձայնվի Գեվորգ Բաղդանչիչի լրտեսը լինելու:

ՍԻՄՈՆ.—Դրանով դու ի՞նչ ես ուզում ասել:

ԱՐՇԱԿ.—Տես ուզում եմ ասել, վոր դու ծախված մարդ ես, վոր Գեվորգ Բաղդանչիչը քեզ պես ախմախներին կարողացել ե խաբել, իր ձեռքին կույր գործիք դարձրնել, և ես՞որ դուք անգիտակցաբար նրան եք յենթաբկվում, նրա հրամանները, նրա թելադրանքները կատարում...

ԳԱՐԵԳԻՆ.—Տո վողորմելի, դու հասկանում ես թե ի՞նչես
անում:

ԱՐՇԱԿ.—Գիտես թե ո՞ւրես զլորվել... դավաճան հուղան...

ՍԻՄՈՆ.—Ե՛, Էս...

ԱՐՇԱԿ.—Լսիր, արդարանալ դու չես կարող, քո մասին
մենք ամեն ինչ գիտենք, վոր դու հարբած չես, և դիտմամբ
հարբած ես ձեզանում, այդ ևս գիտենք: Լսիր, դու պետք է ամեն
ինչ խոստովանվես, հակառակ դեպքում յես քեզ կխեղդեմ,
կսպանեմ, սրիկա... (Հարձակվում է Սիմոնի վրա, Աբրեհամը
արգելում է, իսկ Սիմոնը ոգսվելով հանգամանից գուրս է
վազում):

Տ Ե Ս Ի Լ 3

ԱՐՇԱԿ, ԳԱՐԵԳԻՆ, ԱԲՐՀԱՄ

ԱԲՐՀԱՄ.—Սպասիր, ի՞նչես ուղում անել, խաբված ու մո-
լորված բանվորի հետ եղ լեզվով չեն խոսում...

ԱՐՇԱԿ.—Խաբված ու մոլորված բանվորին համոզելու
համար գործ դրած բոլոր միջոցները սպառելուց հետո, մեզ
մնում է մի բան, խփել և շան սատակ անել... այո, մեր ընդ-
հանուր գործին զիստ բերող լրտեսներն ու մատնիչները մեր
շարքերում չպետք է լինեն...

(Գրիգորը շատ մտնում է յեվ առանց մի բան արտասա-
նելու կանգնում յեվ ապշած նայում)

Տ Ե Ս Ի Լ 4

ԱԲՐՀԱՄ.—ԳՐԻԳՈՐ...:

(Խորհրդավոր նայում էն իբր):

ԳԱՐԵԳԻՆ.—Գրիգոր...

ԱՐՇԱԿ.—Ի՞նչ արիր...

ԳՐԻԳՈՐ.—Վերջացրի...

ԱԲՐՀԱՄ.—Վճրին

ԳՐԻԳՈՐ.—Յերկուսին ել միատեղ...

ԱՐՇԱԿ.—Կարողա պատահի, վոր քեզ հետեվելիս լինեն, քո
ձստեղ մեալը վտանգավորա, քնա:

ԳԱՐԵԳԻՆ.—Ճիշտա ասում, դու գնա, մենք ել քիչ հետո
դուրս կգանք... (Գրեգորը գնում է)

ՏԵՍԻԼ 5

ՆՈՒՆԻ, ԹԱԹՈՍ, ՄԱԹՈՍ ՅԵՎ ԽԵՉՈ

ԹԱԹՈՍ.—Յես վոր մի որ գինի արաղ չխմեմ, են որը ինձ
համար որ չի: Դուք կարծում եք յես չեմ հասկանում, վոր խը-
մելը ֆնասակար բանն... յես լավ եմ հասկանում, և դրա համար
ել յես շատ անգամ ուզելեմ խմելը թարգ անեմ, ու քանի ան-
գամ մտքուս դրել, վոր ես փողոցով չանցնեմ շիրաղ Գիգուրի
յերեսը չտեսնեմ, չի ըլլում: Եղ զահրուճար գինու տկճորն ու
արաղի բոշկեքը ընենց մի գորություն ունեն, վոր իձն քաշուժ
գեսնեն բերում...

ՄԱԹՈՍ.—Եղ արաղն ու գինին, վոր տեղովը մի թույն ել
դառնա, ու թունավորի, մարդ հենց ուզումա վոր մի գլուխ խմի:
Դրա թարգ անելը դժվարա, շատ դժվար...

ԽԵՉՈ.—Ավետարանի մեջ գրվածա, վոր գինին քրիստոսի
արյուննա, արաղը՝ Պիղատոսի արտասուքը. վոր եղ սուրբ գրքի
ասածները ճիշտա, յես դրանում չեմ կասկածում: Չունքի վոնչ
ավետարանը սուտ կը խոսի, վոնչ տերտերն ու տիրացուն: Դրա
համար ել գինի, արաղ խմելը թարգանել, եղ միևնույնա թե,
մարդ իր հովատը ուրանա... իր կրոնը մոռանա...

ԹԱԹՈՍ.—Եղ որհնած գինու արաղի հոտը խունկ ու մոմից
գորավորա: Նրա հոտը ում քթին վոր դիպչումա, նրա խմելու
ախորժակը գրգռվումա, իսկ ախորժակը գրգռվելուց հետո հա-
վատս ել կուրանամ, մասսաքս ել... Յես հմի ձեղհարց եմ տա-
լիս, խմելը դուք ի՞նչ եք հասկանում,

ԽԵՉՈՆ.—Պսեղը՝ յես խմել եմ հասկանում.

ԹԱԹՈՍ.—Չե, դու չհասկացար.

ՄԱԹՈՍ.—Պսեղը՝ յես լակել եմ հասկանում.

ԹԱԹՈՍ.—Ըղորմի հորդ, դու լավես հասկացել, (Խեչոյից)
իսկ ինչ վերաբերում ա, վոր դու ասումես ավետարանումը գը-
րածա թե գինին՝ քրիստոսի արյուննա, արաղը Պիղատոսի ար-
տասուքը, դրանք գիլի դադարկ, մոգոնած բաներ են Ավետարանն
ելա մեղ խարում, տերտերն ել ու տիրացուն ել...

ՄԱԹՈՍ.— Յես իմ աստոծը գրուստա ասում.

ԹԱԹՈՍ.— Յես բնենց գիտեմ, վոր եթե դուք ետ գինին ու
արազը քրիստոսի արյան ու Պիղատոսի արտասունքի տեղ խմեք
քրիստոսի աղոթած եշի նման անգաջներդ քաշ կանենք ու տեղ-
ներումդ սուս ու փուս դինջ կնստեք: Դե, խմեք...

(յերեբով ծիծաղում են յեվ սեղանին խփում):

Տ Ե Ա Ի Լ 6

ՆՈՒՅՆՔ ՅԵՎ ԱՐՏՈ.

ԱՐՏՈ.— Ի՞նչ եք հրամայում.

ԹԱԹՈՍ.— Ներողութուն մենք խաղեյին չենք, վոր հրա-
մայենք, մենք խնդրում ենք, վոր դու գնաս ետ քու հալալ ձեռ-
քովդ երկու խելաղա կախեթու գինի լցնես ու բերես մեզ համար:

ՄԱԹՈՍ.— Յերկու շամփուր ել խորոված.

ԽԵՉՈ.— Հաց ու սխախի, կանաչ խիարներն ել հետը.

ԱՐՏՈ.— Ես նմուտիս... (գնում է)

ԹԱԹՈՍ.— Իմ պալուչկաս ես անգամ պոչնի դուրս ե կավ մի
քանի մանեթի գլխին հստեղ քար կգցեմ, իսկ մնացածը դա-
կապեյկա կտանեմ կնկաս կտամ, թող նաեւ քիչ ուրախանա ու
տանի երեխեքանց համար ինչ հարկավորա առնի:

Տ Ե Ա Ի Լ 7

ՆՈՒՆՔ ՅԵՎ ԳԻԳՈՂԻ

ԳԻԳՈՂԻ.— (տեսնում) Արտո ջան, հենց ապրես, գուքնի ա-
ղաքն ավլե ու մե լաղաթին ջրե, շաքաթ որե, գնացող եկող շատ
կուլի, իս մի տեհնեմ սրանք ետի ի՞նչեն անում... անիծածները
խմելու համար հո չեն գալի, գինին մահանա ե, ուրիշ վսնչիչ, ով
ե իմանում ինչ սովետեն անում... վճենց կամացեն խոսում...

(մոտենում է յեվ խորագնին ցայում)

ԱՐՐՀԱՄ.— Ա՛, Գիգոլի բարե.

ԳԻԳՈՂԻ.— Վահ, Աբրամ դունիս, վահ, Արշակ, Գարեգին
վահ իս ձիր հոգուն մատաղ, դե սսեք տեհնեմ վճենց իք, վճենց.

ԱՐՇԱԿ.— Ես մի բաժակը դեռ մի վերցրու խմի.

(գիցով լիք բաժանելը սալիս և Գիգուլուն)

ԳԻԳՈՒԼԻ.— Ես աստուծ կի՛նք տա մեր դուշմանին. վուր մեր լավը տե՛նում ե աչքնե քոտանում, ուղում ե թե մոտ դա ֆիստի ծնգներն են թիլանում. հեռվից կանգնած մտիկ ե անում. աղի պես հալվում ե, մոմի պես վառվում... (Խմում ե)

ԱԲՐՀԱՄ.— Անուշ. անուշ...

ԳԻԳՈՒԼԻ.— Անուշ կենաք... Գիտեք ինչ կա. ասանց դուշմանի մարդը մե գրոշ չարժե: Գուշման թե կու՛նենաք, ձեր գործին դուք մուղայիթ կու՛լիք:

ԱԲՐՐԱՄ.— Գիգուլին ճիշտ ե ասում, վերցրեք եքստրա սրս կենացը խմենք:

(Խմում են)

ԳԻԳՈՒԼԻ.— Շնորհակալ յեմ, սաղըլեք, ուրախ ըլլեք, համաշա ըսենց կամպանիով քեֆ անեք...

ԱՐՇԱԿ.— Գիգուլի ջանս ներեղություն կանես, վոր քիչ ուշանում յենք...

ԳԻԳՈՒԼԻ.— Հաջաթ չե, դուք շախով կացեք. դուքանս ձեզ պես տղերքանց համա փեշքաշա, թեկուզ սաղ որով նստիք, ձեզ սիլ ե բան ասում. բաս ել վո՛ւր որվա համար ենք ես տի հնգած վուր մեկս մեկու քոմագ չանինք...

(Գարեգինը, Արեակը լեվ Ռերհամը գնում են)

Կորեք, կորեք սարսաղ մոնդուկներ. իս ձեզ լավ եմ ճանաչում դիտեմ ինչ պտուղներնիք, ձեզ տուն թողնելու չե. համա ինտարած, չարա չկա, դովրան ձերն ե...

ԹԱԹՈՍ.— Գիգուլի. տես Արտոն ի՞նչ ելավ, ո՞ւր մնաց

ԳԻԳՈՒԼԻ.— Ես նմուտիս, Արտո ջալդ արա. (գուրս և գնում)

Տ Ե Ս Ի Լ Տ

ՆՈՒՅՆՔ ԵՎ ԱՐՏՈ

(Արտոն լեկու խելագով գիճի. հաց, պանիր, կահաչի բակալներ եվ ալն բերում ե դարսում)

ՄԱԹՈՍ.— Արտո ո՞ւր մնացիր դե բեր ե...

ԹԱԹՈՍ.— Դե վերցրեք, վերցրեք չորացած բողազներս մի թրջենք... (Խմում են)

(Ներսիս աղմուկ)

ՄԱԹՈՍ.— Ես ի՞նչ դալժաղալա Արտո.

ԱՐՏՈ.— Գեվորգ բաղդանիչի զարաստովկա արած բանվոր-
ներն են.

ԽԵՉՈ.— Բա ձեզ մոտ ի՞նչի համար են եկել, ի՞նչ են ու-
ղում:

ԱՐՏՈ.— Աստոծ վոչ գիտե սրանց գլուխն ու արեը, դրանք
իրանց զարաստովկով զահլա տարան: Դրանց շքանը խիստ մա-
ղալու ա դրանք քանի զարաստովկա չեին արել, մենձ-մեձ եյին
խոսում, այ մենք ես կանենք, այ են կանենք, այ ըսենց շուս
կտանք, ընենց կանենք, մի խոսքով մեծ պլաններ եյին քաշում
համա վերջը փուստ գուրս եկավ... Վոչինչ չկարացին անել, ու
հմի երեկվա ասլանները ես որ քաղցած գլխներ են դառել ու
ոռնում են... (Թարսու ու Մարսուք ծիծաղում են)

ԽԵՉՈ.— Ի՞նչ եք ծիծաղում, ինձ թվում է վոր ես տեղ
ծիծաղելու վոչինչ չկա: Մենք ել բանվորներ ենք, ես ուղտը
իր ծուռը մեջքով մի որ ել մեր դռանը կշոքի... Հետո, հետո,
դու քու խոսքը շարունակի.

ԱՐՏՈ.— Հետո ինչ. Գեվորգ բաղդանիչի այնումնեւ չի. զա-
բաստովկան թե կուզ մի տարի ել շարունակվի: Նա իր փորը
կշտացրելա, իր տաք տեղումը նստել, վայն եկել սրանց տարել
վոր տանը ուտելու մի կտոր հաց չունեն: Ամեն որ գալիս յեն
մեզ մոտ գլուխներս տանում. մեկը չայ, մեկը պանիր, մեկը չես
գիդա ինչ... այ հրես եկան... (Արսոն գնում է)

Տ Ե Ս Ի Լ Գ

ՆՈՒՅՆՔ, ԳԻԳՈՒԻ, ՇԱՔՐՈ, ՑԵՎ ՄԻ ԽՈՒՄԲ ԲԱՆՎՈՐՆԵՐ

ԳԻԳՈՒ.— Շատ նհախ արիք, ո՞վ եր ձեր գլուխը կտորում.
տեհնում էք ջիբներդ գրուշ չկա. տանը ուտելու հաց չունիք
ի՞նչ եք փիքր անում ու զարաստովկա անում... Վուր արել եք
գնացեք քաշեք, համը լավ տեհեք, վուր խելքներդ մոդ ըլի ու
ել ուրիշ գամ ետ թավուր տուտուց բանիր չանիք... Վուր մոդ
եք ըլում եստի ի՞նչիք փիքր անում, դուքանս վուր լիքնե,
գանա տիփ իմնե... Են չայը, շաքարը, հացը, պանիրը, միսը,

նազից, գինին արագը, իս վուր ձեզ նիսիա բաժնեմ, իժոււմ
տիրուչը ի՞նչ ջուղար տամ... Չե ախպեր, չեմ կանա, թալաթ
զարար իմ անոււմ:

ՇԱՔՐՈ.—Մենք ձեզնից վողորմություն չենք ուզում, ես
քանի որն ե, յիրևի շուտով գործը կսկսվի կը գնանք կաշխա-
տենք և մեր պարտքը կտանք...

ԲՈՂՈՐԸ.—Ի հարկե կտանք, ի հարկե կտանք ...

ԳԻԳՈՂԻ.—Գանա չեմ գիտի, համա որեսի գենը ել ոչովի
նիսիա չեմ տալի, թե կուզ Աստուծը ինքը գիվիր դա, թե մար-
զեք իմացեք: Անթե չե, եստի դուքնի տեր մենակ հո ես չեմ,
շատերը կան: Ի՞նչի նրանցմեն չեք ուզում ...

ԲՈՂՈՐԸ.—Ուզում ենք, վոր չին տալիս ...

ԳԻԳՈՂԻ.—Նրանք վուր չին տալիս, իս ի՞նչի տամ ...

Հազրոււմը ձեր խաղեյինի մոտ փիսամարդ գուրս գամ ... Չե
ախպեր, գիտեք ի՞նչ կա, քան թե ինձմեն եք խնդրում, ուիրո
լով կուլի վուր գնաք ձեր խաղեյինին մե բերան խնդրեք թող
գավողը բաց անի, գնացեք նստեք բանեք, համ ձեզ համա լավ
կուլի, համ իր համա, համ ել ինձ համ ...

Տ Ե Ս Ի Լ 10

ՆՈՒՅՆՔ ՅԵՎ ՍԶԱԿ

(Սհակը շապ շապ մննում է)

ՍԶԱԿ.—Ի՞նչ եք հալաքվել, մի դուրս յեկեք տեսեք ինչ
խարարա ե ... վա՛յ մեզ, վա՛յ մեզ ...

ԲՈՂՈՐԸ.—Ի՞նչ կա, ի՞նչա պատահել ...

ՍԶԱԿ.—Գեվորդ Բաղդանիչին և գործարանի կառավարչին
սպանել են ...

(Ամենք գորմացած իրար յերես են նայում)

ԲՈՂՈՐԸ.—Ի՞նչ ես ասում, եզ սվա սպանել ...

ՍԶԱԿ.—Սպանողը հայտնի չի, դրա համար քննությունա
կատարվում ... Մի դուրս յեկեք տեսեք թե ինչ է կատարվում
... Ամբողջ քաղաքը դրա մասինս խոսում ...

ԲՈՂՈՐԸ.—Գնա՛նք, գնա՛նք իմանանք ...

(Բանվորները գնում են)

ԳԻԳՈՂԻ.—Իե արի ու նիսիա բաժնե ...

Տ Ե Ս Ի Լ 11

ԳԻԳՈՒԻ, ԹԱԹՈՍ, ՄԱԹՈՍ ՅԵՎ ԽԵԶՈ

ԳԻԳՈՒԻ.— Խո տեհնում էք, թե դուք ել զարաստովկա
անեք, ես որը կունգնեք ... Զարաստովկան դրուստա լավ բան,
մազրամ ձեզ համար չե ...

ԹԱԹՈՍ.— Խելքը գլխին, մարդը զարաստովկի համար չի
ել մտածի: Արտոին մի ձեն տուր ասա մեզ համա յերկու պոր-
ցի խորոված և մի խելադա ել գինի: (ԳԻԳՈՒԻՆ ԵՒՄԲԻԳ ԲԱՐԾՐԱ-
ՆԱՅԻՆ)

ԳԻԳՈՒԻ.— Արտո, յերկու պորցի խորոված ու մի խելադա
ել գինի, ջալդ արա: Իս ասիլ իմ ու ելի ասում իմ, զարաստովկան
լավ բան է, համա ձեզ համա չե ...

ՄԱԹՈՍ.— Զարաստովկա անոզն իր տանը ալյուրի ամբար
պաի ունենա, վոր հացը թխի ու մի կողմից նստի ուտի, մինչև
վոր խաղեյինի համբերությունը հատնի, գա քեզ կանչի, վեր
կենաս ու գնաս ...

ԳԻԳՈՒԻ.— Ողորմի հորդ, դու լավ ասիր, ըզնաչխտ զարաս-
տովկան փոնչու կսազի... (ԲՈՂՈՐԸ ԺԺԺԱԳՈՒՄ ԵՆ)

ԹԱԹՈՍ.— Ինչի մենակ փոնչուն. գինի ծախողին ել լավ
կը սազի. գինու տկճորի կողքին նստես, նառչարարով խոզի
խորովածը գնես առաջդ մի կողմից ուտես, մի կողմից խմես,
վոր խաղեյինը գա կանչի ել, չգնաս ... (ԺԺԺԱԳՈՒՄ ԵՆ)

ԳԻԳՈՒԻ.— Դու ուփրո լավ ասիր ... հա՛, հա՛, հա՛ ...
(ԳՈՒՐՈ Ե ԳՆՈՒՄ)

(ՅԵՐՏՈՆ ԽՈՐՈՎԱԾԸ յԵՎ ԳԻՆԻՆ ԲԵՐՈՒՄ Ե յԵՎ ԵՏԱՊ ԳՆՈՒՄ:
ՓԱՐՔԱՆ ԳՆԳՈՍԻՆԵՐԻ ՄԵՅ, ԵՎԸ ԳԼԽԻՆ ՄՏՆՈՒՄ Ե յԵՎ ՄԻ ԱՆ-
ԿՈՒՆՈՒՄ ԼՈՒ ԱՅՈՒՄ:)

Տ Ե Ս Ի Լ 12

ՆՈՒՅՆՔ ՅԵՎ ՄԱՐԹԱ

ԹԱԹՈՍ.— Խորովածը, վոր յեկավ, խոսալը թողեր:
Գեվորդ Բաղդանիչի բանվորները վոր զարագտովկա անեն ձեզ
ինչ, վոր նրան խփեն սպանեն ինձ ինչ, լավ մարդա, թող չսպանվի...

Ամեն մարդ թող իր համար մտածի, իր մեռլի համար լաց ըլի՝
Դուք ձեր առաջը մտիկ տվեք, տաք տաք խորոված, կարմիր գի-
նի, կերեք, խմեք քեֆ արեք, դուշմանի աչքը հանեք ...

ՄԱՐԹԱ.— Առաջ բու աչքը հանեմ, հետո սրանցը, այ
մարդ, դու չես ամաչո՞ւմ, գետինը չես մանո՞ւմ, յերեխեքդ սո-
ված ծարավ պցել ես տուն, իսկ դու եստեղ նստել խորոված ես
ուտում, գինի տուաքվո՞ւմ ... այ հարամ ըլի, քնթովդ դուրս
գա ... Յարար վո՞նցա եդ թիքեքը բողազովդ կուլ գնում, ի՞նչի
թիքեքը ոսկոռ չի դառնում, բգիդ մոում ...

ԹԱԹՈՍ.— Ա կնիկ, դե բուլա, քաշվի գլխիցս կորի ուղ ելի
սրանց մոտ դու ինձ արիժատ ես անում, ամոթա:

ՄԱՐԹԱ.— Ձենդ կարի, ամոթը նա ա, վոր մեղ տանն ա-
ռանց հացի յես թողնում, իսկ դու ես տեղ գինի տուաքվում:
Անխիղճ, անաստված, աչքս ջուրա կտրում սաղ շարաթ սպասե-
լով, վոր մի քանի մանեթ փող կստանաս կբերերս կտանք մեր
ցավին, մեր դարդին... Իսկ դու ստանում ես ու բերում
պաղվալներում քո ու փուչ անում... Այ քանդվի, բրիշակ
դառնա, վոր ձեր արուն-քրտինքով ձեռք բերած աշխատանքը
չբերեք ածեք ես քանդվածը, ես բարբաթը...

ԹԱԹՈՍ.— Ա կնիկ, դե բուլա, սրանց կշտին դու ինձ թա-
մամ ասկարրգիտ արիր...

ՄԱՐԹԱ.— Գու աչքն ել դուրս գա, սրանցն ել: Մի բարի
պտուղներ ել սրանք չեն: Հողս սրանց գլխին: Սրանք վոր նա-
մուսով-արուսով մարդիկ ըլեն չեն գա ընկնի ես միկիտանխա-
նեքը, տուն չունեն, տեղ չունեն, ցավ չունեն, թե դարդ չունեն...
Վեր կաց գնանք...

ԹԱԹՈՍ.— Լավ, դու գնա, յես հետո կգամ:

ՄԱՐԹԱ.— Յես քեզ ասում եմ վեր կաց թե չե, ես խելա-
դեն գլխովդ եկավ... (Խելագեճ բարձրացնում է, Թարոսը ձեռ-
ից խլում է)

ԹԱԹՈՍ.— Գիժա ես մունդուիկր...

ՄԱՐԹԱ.— Գիժեկ ես ու բնեղիան ել ես, հողեմ գլուխդ,
վեր կաց քեզ ասում եմ...

ԹԱԹՈՍ.— Վճրտեղից եկավ ես սատանեն... Տո չես թող-
նելու փսոնս ելա տամ...

ՄԱՐԹԱ.—Ձեռք կտրի, թե չե աշխարհը գլխիդ կմթնացնեմ
ինչ իրավունքով դու իմ յերեխանց ուղղըն փսոնի պետք ե տաս,
քոռանաս դու, վոր խմելու համար դու եղքան գլուխդ կորցրել
ես, ել վոչ տուն ես ճանաչում, վոչ կնիկ ես մտաբերում և վոչ
յերեխա (Բաբեռում ե) վերկաց, վերկաց:

ԹԱԹՈՍ.—Տղերք, իմ փսոնս ել տվեք:

(Մարթա յեվ Թարոս զուրս են գնում)

ՄԱԹՈՍ.—Համադա կնիկս հա՛մ, մեզ լավ խայտառակեց, եդ
թուք ու մուրը մինչև հավիդյան մեզ բոլա, վեր կաց, մենք ել
գնանք, քանի մեր կնանիքն ել չեն եկել և մեզ զոռով տարել...

ԽԵՉՈ.—Գնանք ախպեր, ես կնիկ արմատներից ամեն ինչ
սպասելու ա: (Խեչոն յեվ մարոսը իբար ուսերից բռնած զուրս
եմ գնում):

Տ Ե Ս Ի Լ 13

ՔԱՂԱՔԱՊԱՀ ՅԵՎ ԳԻԳՈՂ

ՔԱՂԱՔԱՊԱՀ.—(մտնում ե խորագնեին հայում) Վոչ վոք
չի յերևում:

ԳԻԳՈՂ.—Ո՞ւմն ես ուզում, ի՞նչի համար ես ման գալիս:

ՔԱՂԱՔ.—Քեզ մտա կասկածելի մարդ չի մտել:

ԳԻԳՈՂ.—Կասկածելի մարդը գալիսա իմ կուշար ի՞նչ
զլուխը քարովը տա: Կասկածելի մարդկանց իս ինքս իմ դուրս
անում... (Շեմֆից) Աբառ, սրան մի կես տրիցատկա խմցրու
ճամփու դիր... Դե գնա, գնա ել մի ուշանա...

(Քաղաքապահին հանապառհ ե գնում: Մտնում են
խալի բերդ յեվ կարսա բերդ բանվորները)

Տ Ե Ս Ի Լ 14

ԳԻԳՈՂ ԽԱԼԻ ԲԵՐՈՂ ՅԵՎ ԿԱԹՍԱ ԲԵՐՈՂ

ԽԱԼԻ ԲԵՐ.—Գիգոլ ջան, երեխեքս յերկու որա նշխարհք
չեն դրել բերանները, առ ես խալին վերցրու մի բան տուր
տանիմ երեխեքս ուտեն...

(Գիգուլը նայում է խալուհ)

Առ լավ մտիկ արա. (փռում է գեղնի վրա)

ԳԻԳՈՂԻ.— Տե՛նումս իմ, հասան խանի դովրի մնացած բան
ե...ե՛ն ինչվուր է, գինը սաս, համա թանգ չասեա, թե չե չեմ
վեկալնի:

ԽԱՂԻ ԲԵՐ.— Թանգ կամ եժան ասելու ինչ կա, յես ծա-
խելու նպատակով չեմ բերել: Ուրիշներին իրանց հորից կամ
պապից ահագին հարստություն, տուն, տեղ, բաղ ու բաղչա ա
մնում, ինձ ել ես մի հատ խալինա մնացել, են ել յերիսանցս
տակից հանել ու բերել եմ...

ԳԻԳՈՂԻ.— Դե լավ, տար տուր Արտոյին ու նրան սաս
թող հինգ գրվանքա հաց տա, մե գրվանքա պանիր, կես գրվան-
քա շաքար. մե ասմուշկա շայ, մի գրվանքա ել նավթ:

ԽԱՂ. ԲԵՐ.— Քիչա Գիգուլ:

ԳԻԳՈՂ.— Քիչ չի, կուզես յերկու գրվանքա ել միս ավել-
ցնեմ:

ԽԱՂԻ ԲԵՐ.— Միսը թող հարուստները ուտեն, մենք բան-
վոր ու շքավոր մարդիկ ենք, ցամաք հացով մթնումը առանց
ճրագի յեկ յոլա կգնանք, մսի ու նավթի տեղ սաս թող հաց
ավելացնի:

ԳԻԳՈՂ.— Դե լավ, գնա սաս թող հաց ավելացնի...

(Խալի բերդը գուրս է գնում, իսկ կարսա բերդը ա-
ռաջ է գալիս):

Հա, գուն ինչիս ուզում, ես դուռադան ինչի հա՛ար իս
բերի. տար կորցրու, յես ետի ախլի յաշշիկ չունեմ...

ԿԱԹՍԱ ԲԵՐ.— Գիգուլ ջան, ինչվոր է սա ա, իմ տնում
սրանից լավ բան չի մնացել... Երեխեքս քանի որա հաց չեն կե-
րել: Սարաբի տունը աստո՞ծ քանդի... Ելած չելածներս տարել
վորը ծախել, վորը գրավենք դրել, հույս ունեյինք, վոր հսոր
կգուց գավոզը կբացվի կգնանք կբանենք... Խաղենին սպանե-
լուց հետո գավոզն ել կկողպվի, տուններս ել իստակ կքանդվի...
Մեր գավոզի բժշկին հո ճանաչում ես.

ԳԻԳՈՂԻ.— Վոնց չե. նա իմ հարևանն է, չլնի Գեվորգ
Բաղդանիչին նա յի սպանել:

ԿԱԹՄԱ. ԲԵՐ.—Սպանելն էն ա, վոր Գեվորդ Բաղդանիչի աղջկան նա ուզում ա՝ չեն տալիս, նա ել ջիգրու Գեվորդ Բաղդանիչին և գավոզի կառավարչին յերկուսին ել սպանում ա:

ԳԻԳՈՂԻ.—Վուր աղջկան գոռով տանի՞, այ քեզ մազադուրան, եզ մունդոսիլը ազա Մամազ խանը հո չի, վոր գոռով աղջիկա ուզում փախցնի: Յեքա սլատվական, աբրազովնի մարդա, եզ հանգի բանը նա վոնց և լայկա անում: Դե արի ու նիսիա բաժնե, չե ախպեր, նիսիի տված խերը իս չուզեցի, գնա քու գլխի շարեն տես, ել որեսի դենը նիսիա չեմ տալի, մինչկիլի որս ել վոր տալիս եյի, գավոզի խաթրուն եյի տալի, գավոզը վուր կողպվում ա, իմ նիսիեն ել սեմնից ուղեմ, աստոժ գիտենա, ձեր դարաստովկից հնգգամ ձեր խաղեյինը դարար շարեց, ինչդդամ իս: Դե, ինչ ես կանգնե, գնա:

ԿԱԹՄԱ. ԲԵՐ.—Դատարկ ձեռքով յես սեր գնամ, յերեխեքս սոված-ծարավ ինձ են սպասում, գնամ նրանց ինչ ասեմ, ինչ ջուղար տամ: (լաց և լինում)

ԳԻԳՈՂԻ.—Դե լավ, յեքա մարդ իս, ինչիս լաց ըլում, տար ու Արտոյին ասա թող երկու գրվանքա հաց տա, մի չետվեր պանիր: Դե գնա քեփ արա... (կարսա բերուզ գնում է)

Տ Ե Ս Ի Լ 15

ԳԻԳՈՂ, ԳԱՐԵԳԻՆ, ՅԵՎ ԱՐՇԱԿ

ԱՐՇԱԿ.—Գիգոլ, մեզ հարցնող չի յեղել, մեր գործարանի բժշկը սխալի դար:

(նստում են իրենց հախկից սեղում)

ԳԻԳՈՂ.—Դուք ձեր եզ բժշկին շատ եիք գովում, քիչ անաջ գայիք տենայիք նրա համար ինչ եյին ասում:

ԳԱՐԵԳԻՆ.—Նրա համար շատ բան կարող եյին ասել, իսկ դուք ամեն մի ասածի սխալի հավատասք:

ԳԻԳՈՂԻ.—Ինչի չեմ օվտա, թեկի ասումին: Գիտիք ինչ կա, իս ձիգ դրուտար կոսիմ, ձեր բժշկին իս լավիմ ճանչնում, նրամեն ամին բան օվտայու ե: Դիփ գրանց մեղնե, վուր աշխարհը ըսենց խարար ելավ: Գնում ուսում ին ասնում, խելոքանալու մադիեր ուփրո գովում ին ու գալիսին ասի մինք սոցիալ

ինք կոսե: Ել աստուծ, խեչ, հավատ, սրբութիւն չկա, կոսե Ել մինձ պատիկ, աղա, նոքար, պրիկաշչիկ, դվոննիկ, չինովնիկ, տերտեր, տիրացու, վարդապետ, չնեն կոսե, ու ես թավուր հազար ջուռա տուտուց մոտուց բաներ... Ձե ախպեր, եղ ուսումնականները դիմի մետին թոկով կապելու գծիրին,

(Գարեգինը յեզ Արեակը ծիծաղում են) հա՛, հա՛, հա՛.

Ինչիք ծիծաղում, ձիր արիվը, դրուստիմ ասում, դրանք ինչ եկան շեկան, մեր քաղաքը խարաբ արին: Հե՛յ գիդի, շաբթին մեջ եր, որթածալի բաղերում համքրներով քիֆ կոնեինք, իժում դուդուկը առաջներս գցած, թայգուլն ու վառած մոմերը ձեռքներիս քեմի անելեն գիշերվա կիսին գալիս եյինք տուն, ո՞վ եր հարցնում, ան ո՞վ դարեղվա կոներ՝ ուվարես խոսք ապի... համա ինչ լուսն ընգան ետ սուտի քրիստոսները, եղ անարխիստներն ու պրապագանդիստները, միր քեփնեկ, միր ուրախությունն ել դիմի մետի մոշլա ելալ... միր դրախտի բարերար քաղաքը դժողքից ուվարես դարձրին, ամեն որ բոմբե, ինչ դահրումարե, գցումին ու խալխին պանտի հանգը գլղի գլոր անում...

Արեակ յեզ Գարեգինը ծիծաղում են հա՛, հա՛ հա՛...

Ել մարդ չի կանացի տնեմեն դուրս գա... աստոծ գիտենա, զըզվիցրիբին, զզվիցրիբ...

ԱՐՇԱԿ.— Ձեզ զզվեցնողները, պարոն Գիգուլի- ժողովրդի տականքներն են.

ԳԻԳՈՒԼԻ.— Տականքները կի չե, դիմի եղ ուսումնականներն ին.

ԳԱՐԵԳԻՆ.— Այո, ուսումնականներն են, վոր ժողովրդի համար ավելի շատ են մտածում:

ԳԻԳՈՒԼԻ.— (Խեզեխով) Վոնց վոր ձեր դոխտուրն եր մտածում, Փարմասիոն վարդապետի հանգը մողե անում իր կուշտը ել սապոժնիկ ել փալանդուզ, ել փոնչի, ել քիսաչի,... թավաթ գծեր ին ուփրո գժվացնում ու գցումե խալխի ջանին: Նրա տունը դոխտուրի տուն կի չեր դառել եր հավարարի մեյդանը, ինչ թավուր թոկից փախած մլթոնի ասես վուր չի մտնում...

ԱՐՇԱԿ.— Բժշկի տան գոները բոլոր հիվանդների համար

պետքն վոր միշտ բայց լինի, իսկ թե դուք դրանով ինչ եք ուզում ասած լինել, դա արդեն հասկանալի է... բայց պետք է ասեմ, վոր ձեր կարծիքը սխալ է...

ԳԻԳՈՂԻ.— Վահանը մաշ սոցիալ չի՞,

ԱՐՇԱԿ.— Իհարկե չի՞

ԳԻԳՈՂԻ.— Բա ի՞նչ, թե վուր սոցիալ չի՞

ԱՐՇԱԿ.— Նա անկուսակցական է՞

ԳԻԳՈՂԻ.— Անկուսակցականս վճարնե, առջի գամս իմ լսում, կուլի եղ ել նուր պարտիա է. ախպեր ես մունդուիկ տեղում հնդր դամ խալխ չկա, ինչ դդամ պարտիա կա, սոցիալիստ: հնչակիստ շանտաժիշտ, ֆեդերալիստ, անարխիստ: Անիծածների անուննել արա վուր տալիսինք, վայ թու մե բաշ սատանի հանգը դուս գան ու ցցվին աղաքդ, դե հանե ու նրանց փուղ թավազա արա:

ԳԱՐԵԳԻՆ.— Անկուսակցականները եղպես բաներ չեն ասում.

ԳԻԳՈՂԻ.— Բաս դրանք հարուստների կուշտը կարմիր փեշատով նամակ-չեն դրկում

Նրանցմեն փճեղ չին ուղում...

ԳԱՐԵԳԻՆ.— Ամենևին.

ԳԻԳՈՂԻ.— Այ քեզ լավ բան: Մուլափ. հարցնիլն ամութ չը լի, անկուսակցական շատերը կան, թե մենակ ձիր դոխտուրնե.

ԱՐՇԱԿ.— Ժողովրդի մեծամասնությունը անկուսակցական են լինում, ինչպես որինակ տերտերները, տիրացուները, սարկավաքները, դերասանները, սուզիանները, պրիստավները, գարադավոյները, ժանդարմները... գեղացիք, ու ելի շատերը

ԳԻԳՈՂԻ.— Թե քու մամի հոգին կու սիրիս եղ ինչ գորբա պարտիա է բաս գլուխմեռնի թե վուր խլապոտ շանիմ ու վաղն եկտ չլեն գրվեմ.

ԳԱՐԵԳԻՆ.— Դուք արդեն գրված եք.

ԳԻԳՈՂԻ.— ճվ, ես...

ԳԱՐԵԳԻՆ.— Դուք, ձեր կինը. ձեր երեխեքը՝

ԳԻԳՈՂԻ.— Վահ, վունց թե. իս պարվուրիում գրված ըլիմ, չիմ գիտենա՞: Ան թե չե, ետ պարտիեն ինչ խիստ եմ հավնի, ուր կնգան ու երեխանցս ել եմ գրել տվի... Չե ախպեր, դուն

եանդիւիշ կուլիս, մեր մեջ եղ թափուք բան չկա.

ԱՐՇԱԿ.— Յեզ վոչ ել այդ տեսակ պարտիս կա վոր դու գրվես հա՛, հա՛, հա՛...

ԳԻԳՈՂԻ.— Մա՛շ.

ԳԱՐԵԳԻՆ.— Անկուսակցական նշանակումն վոչ մի կուսակցութեան չպատկանել...

ԳԻԳՈՂԻ.— Ետենց ասա ե՛... կինազամ լեղիս պատովեց...

Տ Ե Ս Ի Լ 16

ՆՈՒՅՆՔ, ՄԻՄՈՆ ՇԱՔՐՈ ՅՎԵ ԲԱՆՎՈՐՆԵՐ

ԲՈՂՈՐ.— Ո՛ւր ե բժիշկը... Ո՛ւր ե նա, մենք նրա հեա գործ ունենք,

ԳԻԳՈՂԻ.— Վա՛հ, ի՞նչ եք բղավում. դոները մերիք կուսարտում, դաշաղներ հո չեք: Բժիշկի մոտ գործ ունեք՝ գնացեք նրատունը, ինձ մոտ ի՞նչ իք գալի...

ՇԱՔՐՈ.— Նրա տանը մենք գնացինք, մեզ ասացին, վոր բժիշկը ուզում ե մեզ տեսնել, իսկ մեզ տեսնելու համար նա այստեղ պիտի գար.

ԲՈՂՈՐԸ.— Յեթե յեկել ե, թող դուրս գա, մենք նրա հեա գործ ունինք... (աղմուկ)

ԳԻԳՈՂԻ.— Գիժ են ես մուսուրիկները. իժում ի՞նչ իք բղավում, բղավել չնի, թե չե հետի կու բղավիմ, վոր ձենս Հաշտարխան կը գնա... Ես տեղ ասում եմ, թե խելք ունիք մուսուրիկացեք, թե չե ես նմուտիս գարադով կուկանչիմ, ձեզ բունել կուտամ. գարաստովչիկներ բունտովչիկներ... Դուք ինձմեն վախեցեք հա՛

ԲՈՂՈՐ.— Մենք վոչ վոքից չենք վախենում... .

ԳԻԳՈՂ.— Մաթրախի շրփշրփոցը թե կու լսիք, կու վախենաք

ՇԱՔՐՈ.— Ձենդ տաք տեղից ե դուրս դալիս: Դու վոր կերել կշատցել ես, մեզ ել հարցրու ե՛.

ԲՈՂՈՐԸ.— Յերկու որ ե մենք հաց չենք կերել

ԳԻԳՈՂ.— Փոնումը քիչ հաց կա՛. գնացեք կերեք. ձեզ մզ ե դադադա անում...

ԲՈՂՈՐ.—Փռնի տեղը մենք ել գիտենք, փող վոր չունենք.
ԳԻԳՈՂ.—Վուր աշխատիք, կունենաք՝

ՍԻՄՈՆ.—Մենք աշխատում եինք, փող ել ունենք. բայց
բժշկի պես անխեղճ ու անասաված մարդը եկավ մեզ խարեց ու
մեզ տեղիցը զրկեց...

ԲՈՂՈՐԸ.—Նրա պատճառով հարյուրավոր մարդիկ գործա-
րանից զրկվեցին. (աղմուկ)

ԳԻԳՈՂԻ.—(Յ. Բ. Ե. Կ. Ը.) աղի թե սոցիալ չե. դե արի ջուղարը
տու.

ՍԻՄՈՆ.—Բժիշկը չլներ մենք գործադուլ չեյինք անի. և
Գևորգ Բաղդանիչը չեր սպանվի...

ԱՐՇԱԿ.—Սուտ ես ասում, սրիկա, խառնակիչ. գործադուլի
պատճառը մենք եյինք, և յեթե այսոր դուք պարտվում եք
և ձեր գործադուլը անհաջողության ե հանդիսում՝ մեղավոր հա-
մենայն դեպս բժիշկը չե... Յեվ բավական չե, վոր դուք բանվոր-
ության միտքը պղտորելու ստոր մատնչի և խառնակչի դերն
եք կատարում, այլ մի ուրիշի դժբաղդության պատճառ ել եք
ուզում դառնալ... յես քու կյանքիդ վերջ կտամ, մատնիչ, սրի-
կա... (Գառուցք հանած ուզում ե հարձակվել Սիմոնի վրա,
Գարեգինը բռում ե)

ասա, ի՞նչու համար ես սրանց հավաքել. ի՞նչու համար ես
սրանց գոգոում բժշկի դեմ. ի՞նչեւ ուզում դու նրանցից. ի՞նչ
ե արել նա քեզ... Մատնիչ. հուզա...

ՇԱՔՐՈ.—Ի՞նչենք սրան լսում, սա դուրս արվածներիցնա,
գնանք, բժշկին գտնենք...

ԲՈՂՈՐԸ.—Գնանք, գնանք ... (աղմուկով գնում ե)

ԳԻԳՈՂԻ.—Ես գալմսդալումը մե բաշ գարադավոյ տուն
չգամ ... (գնում ե)

ԳԱՐԵԳԻՆ.—Գնանք բժշկին գտնենք և զգուշացնենք, կույր
ամբոխը գոգոված ե նրա դեմ ... (գնում ե)

ՏԵՍԻՆ 17

ՍԻՄՈՆ, ՇԱՔՐՈ, ՎԱՀԱՆ ՅԵՎ ԱՄԲՈՆԸ

ԲՈՂՈՐԸ.—Մենք հաց ենք ուզում, մենք ապրել ենք ու-
զում ...

ՎԱՀԱՆ.—Դուք ապրել եք ուզում, դուք գոյության կռիվ եք մղում, բայց ուրե, ինչու չի լավում անարդարության դեմ բողոքող ձեր հուժկու ձայնը ... ինչու չեմ տեսնում դարերով կաշկանդված կապանքները ձեր ջլուտ բազուկներով ջաղջախվելիս ...

ՍԻՄՈՆ.—Ձեք ուզում լսել, մենք քարոզներ շատ լսեցինք, և եղ քարոզները մեր տունը քանդեց, եղ քարոզներով եք ուզում դուք նորից մեզ կերակրել. մենք չենք ուզում. եղ մեծ մեծ հույսեր խոստացող քարոզները դուք ձեզ համար պահեք. նա հաց չի տալիս, մենք քաղցած ենք, մենք հաց ենք ուզում...

ԲՈՂՈՐԸ.—Մենք քաղցած ենք, մենք հաց ենք ուզում ... Մենք սովից մեռնում ենք, մենք տանջվում ենք:

ՎԱՀԱՆ.—Միթե յես չեմ տեսնում ձեր տանջանքը, ձեր տառապանքը ... Ա՛հ, կյանքս կտայի, յեթե կարողանայի ձեր վիճակի դառնությունը գեթ մազաչափ թեթևացնել ...

ՍԻՄՈՆ.—Ձեք ուզում լսել:

ԲՈՂՈՐԸ.—Ձեք ուզում լսել, չենք ուզում լսել ...

ՎԱՀԱՆ.—Ի՞նչու ձեր գիտակցությունը այդ աստիճան մը թագնված խեղաթյուրված պիտի լինի, վոր դուք ձեր բարեկամն ու թշնամին զանազանել չկարողանաք ... և դուք այսօր փոխանակ ձեզ տանջող ու ստրկացնող որենքների դեմ կռվելու՞ ձեր միտքն ու հոգին թունավորող յերևույթների դեմ գինվելու... ձեր հարվածը դուք ձեզ եք զարձնում ...

ՍԻՄՈՆ.—Ձեք ուզում լսել ...

ԲՈՂՈՐ.—Ձեք ուզում լսել ... չենք ուզում լսել ...

ՎԱՀԱՆ.—Լսեցեք ինձ ընկերներ:

ՍԻՄՈՆ.—Լսիր, դու մեր ընկերը չես. դու մեր թշնամին ես ...

ՎԱՀԱՆ.—Սուտ ես ասում, յես ձեր թշնամին չեմ, ձեր թշնամուն դուք զնացեք ուրիշ տեղ փնտրեք ...

ՍԻՄՈՆ.—Մենք նրան փնտրել և գտել ենք ... Մահ նրան ..

(Ուզում է հաճախվել վահանի վրա յեվ նրան զառույժ սպանել, այդ սիջոցին ներս են մտնում, Գրիգոր, Արեակ, Գարեգին յեվ Աբրահամ:)

Տ Ե Ս Ի Լ 18

ՆՈՒՅՆՔ, ԳՐԻԳՈՐ, ԱՐՇԱԿ, ԳԱՐԵԳԻՆ ՅԵՎ. ՅԲՐՀԱՄ

ԳՐԻԳՈՐ.— Թողեք տեսնեմ, այդ սեմնե մահ սպառնում:

(ամենքը մի կողմ են բաժվում, Սիմոնը դառուցը ձեռքին կանգնած լուռ նայում է)

Կույրեր, կնիչու յեք դուք ուզում հանդցնել այն ջահը, վոր մեզ, միայն մեզ և լուսավորում...

ՍԻՄՈՆ.— Եղ լուսատու ջահը, յեթե ձեզ լուսավորումա իսկ, մի ուրիշի կյանքը թող նա չխավարացնի...

ՇԱՔՐՈ.— Մի աղջկա պատճառով նա Գեվորգ Բաղդանիչին սպանելա և հսքան խալխին հացից ու գործից զրկել... Մենք նրանից վրեժ ենք ուզում...

ԲՈՂՈՐԸ.— Վրեժ, վրեժ...

ԳՐԻԳՈՐ.— Վրեժ, բայց վոչ անմեղներից... Գեվորգ Բաղդանիչի սպանողը, նրա կյանքը խավարացնողը ահա կանգնած և ձեր առջև. լուծեցեք նրանից ձեր վրեժը...

(ամենքը զարմացած իրար յերես են նայում)

Այո, նրան յես սպանեցի, նրա կյանքը յես խավարացրի, վորովհետև նա ինքն եր ուզում ձեր կյանքը խավարացնել, նա ինքն եր ուզում ձեզ սպանել, ձեզ բոլորիդ կենդանի կենդանի թաղել, և ահա ձեզ աղատելու ձեր կյանքը փրկելու համար յես ուղեցի միայն այդ անել...

(զղջման իրաբանցում ամբոխի մեջ)

ԱՐՇԱԿ.— Այժմ հասկանում եք ձեր արածը...

ԳԱՐԵԳԻՆ.— Զգում եք թե վորքան մեղավոր եք...

ՎԱՀԱՆ.— Վոչ, նրանք մեղավոր չեն, դուք ել մեղավոր չեք... Ձեր մեղքը, ձեր վոճիրը ձեր տգիտության արդյունքն է, իսկ տգիտությունը ձեր գլխավոր ու միակ դժբաղատությունը...

ՍԻՄՈՆ.— (Դառուցը դեն է ցայրում, զլուխը խոնարհած ու լուռ կանգնում):



Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Ր

ԼՈՒՅՍ Ե ՏԵՍԵԼ ՇԵՂԻՆԱԿԻ ՇԵՏԵՎՅԱԼ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԵՐԸ

- 1. Անարխիստ վողեվիլ 1 դործ. սպառված
- 2. Ուրվականներ կամ Առնդուկենց Գաբոյի
սանր պարողիա 2 դործ. սպառված
- 3. Գործադույ կամ Տգիսուքյան Զոհեր

ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

- 1. Նախորյակին դրամա 4 դոր 2 պատկ.
- 2. Բանդիսներ դրամա 3 դործ. 2 պատկ.



ՀՐԻՊԱԿՆԵՐ

Եջ	Տող վերե- վից	Տարված է	Պետք է լինի
2	3	արհեստակցական	արտիստական
6	5	կամ թե չե նրանք խմեն	կամ թե չե դեղը նրանք խմեն
12	3	շատերն են մտածել և շուտ մտածողներին շատերն են գնդակահարվել	շատերն են մտածել և մտածողներին շատերն են գնդակահարվել
22	17	բռնցքով խոսում է	բռունցքով խփում է
24	25	գոռաօին	գոռացին
25	21	Մեր կռիվը՝ կռիվը	Մեր կռիվը՝ կռիվ է.
32	18	գազազումա	գազազածա
32	14	II. բանվորներ	II. բանվորուհի
33	16	նույնք և բանվորուհիներ	նույնք և Մագթաղ
33	12	զակոհա	զակոհա
41	16	իրար հետ չկովեք	մեզ հետ չկովեք
47	20	աքսոր կբշվեք	բանդը կբշվեք
47	23	տունը կփլվի ձեր գլխին	և այդ բանդը կփլվի ձեր գլխին
48	3	Մեր օրը մթնեց վա՛յ.	Մեռել թաղողներ կան- չեցեք...

Եջ	Տող վերե- վից	Տպված է	Պետք է լինի
48	48	յերկուսին ել սըանում ե և դուրս վազում.	յերկուսին ել սպանում ե ե ուզում ե դուրս գնալ. մանում ե վահան: վահան: — սպասիր. յես լսեցի ձեր վորոշումը ե շտապեցի գալ... (հանկարծ նկատում ե Գե- վորդի ե Ստեփանի սպան- ված լինելը) դու այս ի՞նչ արիր, խելագար... ի՞նչու թունավորեցիր գաղափարը անմիտ վոճրագործու- թյամբ...
51	5	լսիր	լսիր
54	23	ին աբամ	ինչ աբամ
57	4	լավ բան	լավ բան ե
66	27	լսիր	լսիր

— Վարագույր —

ՔԱՂԼՈՒՍԳԼԽՎԱՐԻ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Մալարիա — (4 էջ) սպառված
2. Ինչ հիվանդությունն և տրախտեման
և ինչպես կուվել նրա դեմ (4 էջ) »
3. Գինու տակառի հիվանդությունը և
նրա բժշկությունը (4 էջ) »
4. Բերնի խոռոչը և նրա առողջապահու-
թյունը (4 էջ) »
5. Գավթաղուսվարների I համադումարը
(27 էջ) »
6. Յեկուսեցեկո. — Գրադարանագիտու-
թյան այրենարան (42 էջ) »
7. Գրագե. — Այրենարան մեծահասակների համար
II հրատարակ. 20 կոպ.
8. Ա. Շխասան. — Ընթերցարան կիսագրա-
դետների համար 60 կոպ.
9. Ակուսքային ուղղեցույց (82 էջ)
10. Քաղղուսվարիչների առաջին կոն-
ֆերանսի վորոշումները (27 էջ.)

ԱԳՐՏ ՊԻՅԵՍԱՆԵՐ

11. Յե. Բայնիս-Վուկոզ. — (25 էջ) 1 գործ 10 կոպ.
սպառված
12. Ռեյսներ. — Համաշխարհային
բորսա (18 էջ.) 1 գործ. 10 կոպ. սպառված
13. » — Յերեք Քրիստոս 1 գործ
(18 էջ) 10 » սպառված
14. Չալայա. — կառյա Չուգովա 3 գործ.
(32 էջ) 25 »
15. Արաուզե. — նորից մարտիկների
շարքերում 2 գործ. (24 էջ) 15
16. » — Գոյության կուվում 1 գործ
(24 էջ.) » 15
17. Գ. Մահաբ. — 3 ազիտ ոսկերետ 3 գործ.
(54 էջ.) 30 կոպ.
18. Ա. Վարդանյան. — Տգիտության դոհեր 3 գործ.
(68 էջ) 70 կոպ.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գր.



220038898

[304]

A ¹¹
38898

